



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱՀԱՅԻՉ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

2012թ. փետրվարի 10 - ի թիվ 3/2

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ
ՀԱՏԿԱՅՎԱԾ ՍԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՊԵՏԱԿԱՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԵՐԱՀԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ մասի
գ) կետի պահանջով՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել ՀՀ գյուղատնտեսության մախարարությանը պետական բյուջեից
հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության
կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության
արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ՎԵՐԱՀԱՅԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ

Ի. ԶԱԽԱՐՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողության հիմքը՝ ՀՀ վերահսկիչ պալատի 2011թ.-ի գործունեության տարեկան ծրագրի 5.4 կետը և Վերահսկիչ պալատի խորհրդի 2011 թ.-ի հունվարի 21-ի թիվ 2/7 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ Պետական պատվերի և ծրագրերի կատարման նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը և պետական սեփականության կառավարման և օգտագործման ուսումնասիրություն:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցներ:

Վերահսկողության օբյեկտը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարություն՝ ներառյալ դրա ենթակայությամբ գործող կազմակերպությունները:

Վերահսկողության ծավալը՝ Վերահսկողությունն ընդգրկել է նախարարությանը պետական բյուջեից 2009-2010թ.թ. հատկացված միջոցներն՝ ըստ հետևյալ ծրագրերի.

• 2009-2010թ.թ. սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում

• 2009-2010թ.թ. ցորենի և գարու սերմնաբուծության զարգացում

• 2009-2010թ.թ. գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում

• 2009-2010թ.թ բույսերի պաշտպանության միջոցառումներ

• 2009-2010թ.թ. բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում

• 2009-2010թ.թ. գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և նյութի փորձաքննության միջոցառումներ

• 2009-2010թ.թ Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում հակակարկտային կայանների տեղակայում

• 2009թ. IV եռամսյակ և 2010թ. գյուղատնտեսական կենդանիների պատվաստում

• 2011թ.-ի 1-ին եռամսյակ Պետական աջակցություն գյուղատնտեսական հողօգտագործողներին

• 2009-2010թ.թ. անտառպահպանական ծառայություններ

• 2009-2010թ.թ. անտառապատման միջոցառումներ (Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում)

• 2009թ. անտառավերականգնման և անտառաշինական աշխատանքեր

• ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 01.02.2011-01.07.2011թթ.

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը՝ 01.01.2009 – 01.04.2011թ.թ.:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևը: Վերահսկողությունն ընդգրկել է համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության վերահսկողության տեսակները:

Վերահսկողության իրականացման ընթացքում յուրաքանչյուր ծրագրի համար սահմանվել է էականության մակարդակ, պայմանավորված՝ ծավալով և ծախսերում հնարավոր ռիսկերի առկայությամբ:

Ապացույցների ստացման մեթոդներից կիրառվել են փաստաթղթերի ու ակտիվների ստուգման, ընթացակարգի և գործընթացների ուսումնասիրության, հարցման և հաշվարկման

մեթոդները: Իրականացվել է ֆինանսական հաշվետվությունների և համապատասխան տեղեկատվության տարրերի միջև փոխկապակցվածության և/կամ համեմատության վերլուծություն:

Ստուգման ընթացքում կիրառվել են ընտրանքի, տարբեր տվյալների (քանակական և որակական) համադրման մեթոդներ, կատարվել է նախապես պատրաստված հարցաշարով տարբեր փաստաթղթերի և տվյալների մանրամասն ուսումնասիրություն: Ստուգումներն իրականացվել են նաև ֆիզիկական /չափագրում, գույքագրում/ եղանակով:

Վերլուծության փուլում ամփոփվել են դիտարկման և ստուգման փուլերում արձանագրված փաստերը:

Վերահսկողության արդյունքները՝

I.Սերմերի որակի ստուգման ու պետական սորտափորձարկման միջոցառումների իրականացում

Ծրագրի նպատակը գյուղատնտեսության մեջ օգտագործվող սերմերի որակի լաբորատոր հետազոտությունների, սելեկցիոն նվաճումների հայտերի փորձաքննությունների և բույսերի նոր սորտերի փորձարկումների միջոցով հողագործությունից ստացվող արդյունքի բարելավումն է:

Ծրագիրն իրականարել է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը:

Սերմերի նմուշառման ակտերի և լաբորատոր հետազոտությունների հաշվառման մատյանների ուսումնասիրությունից պարզվել է, որ ՀՀ կառավարության 03.07.2008 թ. թիվ 704-Ն որոշմամբ հաստատված ՄԺԾԾ-ով սահմանված բարձր վերարտադրողականության սերմերի որակի ստուգումներ իրականացնելու փոխարեն կատարվել են ցածր վերարտադրողականության սերմերի որակի ստուգում:

2009-2010թ.թ. կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի միատարրության, կայունության, տարբերիչ առանձնահատկության և տնտեսական օգտակարության պետական փորձարկումներից 295 փորձարկում կատարվել են անվճար, այնինչ համաձայն ՀՀ կառավարության 04.08.2005 թ. թիվ 1275-Ն որոշման և «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կանոնադրության, այդ փորձարկումները հանդիսանում են վճարովի ծառայություններ: Բացի այդ, սորտափորձարկումների արդյունքում ստացված բերքի հաշվառում, մուտքագրում և իրացում ցույց չի տրվել:

Հարկ է նշել, որ վճարովի ծառայության սակագնով 1 հատ սորտափորձարկման գինը սահմանվել է 28.8 հազ. դրամ (առանց շահույթի և ԱԱՀ-ի), այնինչ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 2009թ.-ի բյուջետային ֆինանսավորման հայտով բույսի նոր սորտի

դաշտային փորձարկման գինը ներկայացվել է 134.8 հազ. դրամ, իսկ 2010 թ. համար՝ 130.3 հազ. դրամ կամ շուրջ 4.5 անգամ ավել քան վճարովի պետական սորտափորձարկման համար սահմանված սակագինը:

Ընդ որում, փորձարկումներն իրականացվել են ՀՀ կառավարության 22.12.2005 թ.-ի թիվ 2292-Ն որոշմամբ հաստատված «Բույսերի սորտերի տնտեսական օգտակարության պետական փորձարկումների կազմակերպման, Հայաստանի Հանրապետությունում օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի ցանկում դրանց գրանցման և գրանցումից հանելու» կարգի 7-րդ կետի պահանջի խախտումով. պետական փորձարկումները իրականացվել են առանց ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան որոշումների: Բացի այդ, բույսերի նոր սորտերի փորձարկումներում ընդգրկվել են ՀՀ տարածքում օգտագործվող և հետագա բազմացման համար արդեն իսկ գրանցված թվով 76 բույսերի սորտեր, իսկ 164 բույսերի նոր սորտերի փորձարկումները կատարվել են Ֆերմերային տնտեսություններում, այն դեպքում, երբ համաձայն ՀՀ կառավարության 04.08.2005թ.-ի թիվ 1275-Ն որոշման, նոր սորտերի փորձարկումները պետք է իրականացվեին «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին փորձարկումների, փորձաքննությունների և հավասարեցված ցանքերի կատարման նպատակով հատկացված 79.2 հեկտար հողատարածքի վրա:

Նշված հողերը ոչ միայն չեն օգտագործվել սորտափորձարկումների համար, այլ այնտեղ չեն կատարվել նաև հավաստագրման ենթակա և ՀՀ ներմուծված սերմերով ստուգիչ ցանքեր: Փոխարենը 2009թ.-ին 19.2 հա-ի վրա ցույց է տվել օրենսդրությամբ և կանոնադրությամբ իրեն չվերապահված գործառույթների՝ ցորենի, գարու և կորնգանի ցանքսի աշխատանքներ շուրջ 3,000.0 հազ. դրամ ուղևացված ծախսերով, որից ստացված բերքի իրացումից դրամարկղ մուտքագրվել է ընդամենը 1,023.5 հազ. դրամ, այն դեպքում, որ 72.9 հա-ից, նույնիսկ միայն խոտի իրացումից, երկու տարում կարող էր ապահովել 9,000.0 հազ. դրամի մուտքեր:

Համաձայն ՀՀ կառավարության 22.11.2005թ. թիվ 2122-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետություն մշակաբույսերի սերմերի ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման» կարգի, ՀՀ ներկրված մշակաբույսերի սերմերի խմբաքանակից, վերջնական նշանակման վայրում պետք է վերցվի մնուշ՝ լաբորատոր փորձաքննության և ստուգիչ տեղամասերում ցանքի նպատակով, իսկ արտահանվող մշակաբույսերի յուրաքանչյուր խմբաքանակի համար պետք է տրվի սերմի հավաստագիր: Տվյալ գործառույթները «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից 2009-2010թ.թ. ընթացքում չեն իրականացվել, չնայած որ 2009-2010թթ.-ին ներմուծվել է 90 խմբաքանակ և արտահանվել է 710 խմբաքանակ սերմ:

01.08.2006թ.-ի ՀՀ գյուղատնտեսության նախարարության «ԳԲԱ» ԾԻԳ» ՊՀ-ի և «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրով նախատեսվել է քարելավել հանրային սեկտորի բարձր վերարտադրողականության սերմերի բազմացման հնարավորությունները և հզորացնել «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը՝ ապահովելով վերջինիս լաբորատոր սարքավորումներով, գյուղատնտեսական տեխնիկայով: Պայմանագրի շրջանակներում կազմվել է բիզնես ծրագիր, որով նախատեսվել է նոր սորտերի ստացում, մեծ թվով սերմարտադրող տնտեսվարող սուբյեկտների ներգրավում սերմերի լաբորատոր հետազոտություններում, հավաստագրված սերմերի բազմատեսակի ընդլայնում և այլն: 09.03.2009թ.-ին, «ԳԲԱ» ԾԻԳ» ՊՀ-ի և «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի միջև կնքվել է վերը նշված պայմանագրի կատարման մասին Համաձայնագիր, որով Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին, որպես ֆինանսական աջակցություն, տրամադրվել է 20,000.0 հազ. դրամ (այդ թվում ԱԱՀ): 2009թ.-ի ընթացքում հատկացվել է 19,159.9 հազ. դրամ (այդ թվում 3,193.9 հազ. դրամ ԱԱՀ):

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ բիզնես ծրագրով ակնկալվող արդյունքները «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից չեն ապահովվել: Այսպես, ՀՀ կառավարության 18.08.2005թ.-ի թիվ 1344-Ն որոշմամբ հաստատված պարտադիր հավաստագրման ենթակա 10 անուն բույսերից, «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից, 2009-2010 թթ. հավաստագրվել է ընդամենը 3 անուն բույս՝ ցորեն, գարի և կարտոֆիլ: Որևէ աշխատանք չի իրականացվել մնացած 7 բույսերի տեսակների հավաստագրումը կազմակերպելու և իրականացնելու ուղղությամբ: Չեն իրականացվել նաև աշխատանքներ սերմերի լաբորատոր հետազոտություններում մեծ թվով սերմարտադրող տնտեսվարող սուբյեկտների ներգրավման ուղղությամբ, ինչի մասին վկայում է այն փաստը, որ 2009թ.-ին սերմարտադրությամբ զբաղվել են թվով 18 սուբյեկտ, որոնց տրվել է թվով 109 հավաստագիր, իսկ 2010թ.-ին 14 սուբյեկտ որոնց տրվել է թվով 81 հավաստագիր: Բացի այդ 2010թ.ին սերմերի լաբորատոր հետազոտություններից ստացված եկամուտները 2009թ.-ի համեմատ նվազել են 32%-ով:

II. Ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագիր

ՀՀ կառավարության 15.03.2007 թ. թիվ 451-Ա որոշմամբ հաստատված «Ցորենի և գարու սերմնաբուծության զարգացման ծրագրի» հիմնական նպատակը ցորենի և գարու սերմնաբուծության արտադրության ծավալների, բերքատվության և ինքնաապահովության մակարդակի էական բարձրացումն է: Ծրագրի իրականացման համար ցորենի և գարու սուպերէլիտային և էլիտային սերմերի արտադրության համար սահմանվել է լրավճարների /սուբսիդավորման/ համակարգ, որը հնարավորություն կտա սերմարտադրողներին ցածր գներով իրացնել սերմերը և խթանել դրանց վերարտադրությունը: Լրավճարի չափը սահմանվել է նվազագույն շահավետ իրացման և նախընտրելի իրացման գների տարբերության չափով:

Նշված սերմերը, համաձայն «Սերմերի մասին» ՀՀ օրենքի, հանդիսանում են բարձր վերարտադրողականության սերմեր և ենթակա են պարտադիր հավաստագրման: Հավաստագրերի առկայությունը հանդիսացել է սերմարտադրողներին լրավճար հատկացնելու պարտադիր պայման:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ հավաստագրման գործընթացն իրականացվել է «Սերմերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 18.08.2005թ.-ի թիվ 1479-Ն որոշմամբ հաստատված «Սերմերի հավաստագրման» կարգի պահանջների բազմաթիվ խախտումներով և կրել է ձևական բնույթ:

Բացի այդ, համաձայն ապրոբացիոն ակտերի, որպես էլիտային սերմեր են հավաստագրվել սուպերէլիտային սերմերի ցանքից ստացված սերմերը, այնինչ համաձայն «Սերմերի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով և 6-րդ հոդվածի 4-րդ կետով, ինչպես նաև ՀՀ կառավարության 18.08.2005թ.-ի թիվ 1479-Ն որոշմամբ հաստատված «Սերմերի հավաստագրման» կարգի 5-րդ կետով սահմանված սերմնաբուծության հերթագայության, էլիտային սերմերը սերմնաբուծության բնագավառում գործող տեխնիկական կանոնակարգերի, պետական չափորոշիչների և նորմատիվ այլ փաստաթղթերի պահանջներին համապատասխանող, նախահիմնային (օրիգինալ) սերմերից ստացված սերմերն են, իսկ սուպերէլիտային սերմերից ստացված սերմերը հանդիսանում են վերարտադրված սերմեր (առաջին և երկրորդ վերարտադրությունների, հիբրիդային առաջին և երկրորդ սերունդների սերմեր): Հետևաբար 2009-2010թ.թ. որպես էլիտային սերմեր հավաստագրված սերմերը հանդիսացել են ոչ թե էլիտային, այլ վերարտադրված սերմեր:

2009-2010թ.թ. սուպերէլիտային սերմերի իրացման դիմաց տրված սուբսիդիայի ստուգմամբ պարզվել է, որ պայմանագրերի 1.1 կետով սահմանված փաստացի իրացված սերմերի խմբաքանակների համար սուբսիդիա տրամադրելու փոխարեն, որոշ դեպքերում, սերմարտադրողներին սուբսիդիա է տրամադրվել առանց սերմերի իրացումը հավաստող փաստաթղթերի առկայության՝ 2009թ.-ին 3.6տն-ի համար և 2010թ.-ին 42.5տն-ի համար:

Պայմանագրերի 6.1 կետերի համաձայն, սուբսիդավորման պայմանագրերը ուժի մեջ են մտել պայմանագրերը ստորագրելու պահից, այնինչ 2010թ.-ին 23.8տն սերմերի համար լրավճար հատկացվել է մինչև պայմանագրերը ուժի մեջ մտնելը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2009-2010 թ.թ. կնքված պայմանագրերով տարբեր սերմարտադրողների համար միևնույն սերմերի իրացման համար սահմանվել են տարբեր նվազագույն շահավետ իրացման գներ և դրա դիմաց հատկացվելիք լրավճարների չափեր: Մասնավորապես՝ «Գյումրու սելեկցիոն կայան» ՓԲԸ-ի և «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի համար սահմանված լրավճարների չափերը

պակաս են սահմանվել մնացած սերմարտադրողների համար սահմանված չափերից: Չնայած նշված սերմարտադրողների համար սահմանվել են ավելի փոքր լրավճարի չափեր, սակայն նրանց կողմից արտադրված սերմերը ողջ ծավալով չեն ներառվել սուբսիդավորման պայմանագրերում: Նրանց կողմից արտադրված սերմերի ամբողջ խմբաքանակի սուբսիդավորման դեպքում հնարավոր կլիներ լրացուցիչ սուբսիդավորել համապատասխանաբար 51տն և 50.4տն բարձր վերարտադրողականության սերմեր:

III. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցներով իրականացրած Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին գործնի սերմնաբուծության զարգացման ծրագիրը

ՀՀ կառավարության 29.07.2010թ.-ի «ՀՀ-ում 2010-2014 թվականներին գործնի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագիրը հաստատելու և սերմերի ներմուծումը թույլատրելու մասին» թիվ 971-Ն որոշման համաձայն, «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը Ռուսաստանի Դաշնության Ստավրապոլի երկրամասի «Սեմենա Ստավրապոլյա» ՍՊԸ-ից պետք է ձեռք բերեր 950.0 տն աշնանացան գործնի էլիտային վերարտադրության սերմացու և այն ՀՀ տարածք ներմուծել «Սեմենա Ստավրապոլյա» ՍՊ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությանը սորտափորձարկման նպատակով անհատույց տրամադրված 60.1 տն վեց նոր սորտերի հետ միասին:

«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը, վերը նշված սերմացուները, ՀՀ կառավարության 29.07.2010թ.-ի թիվ 971-Ն որոշմամբ նշված «Սեմենա Ստավրապոլյա» ՍՊԸ-ից ձեռքբերելու փոխարեն, ձեռք է բերել Ռուսաստանի Դաշնության «Հացահատիկային ընկերությունների միավորում» ԲԲԸ-ից:

Ծրագրով նախատեսվել է տեղական սերմարտադրողներից ձեռք բերել 500 տոննա բարձր վերարտադրության հացահատիկային մշակաբույսերի սերմնացու, սակայն ձեռք է բերվել ընդամենը 117,45 տոննա:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ բազմաթիվ դեպքերում ՀՀ ներմուծված և տեղական սերմարտադրողներից ձեռք բերված բարձր վերարտադրության աշնանացան գործնի էլիտային վերարտադրության սերմնացուն տնտեսվարող սուբյեկտներին հատկացվել է ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված կարգի պահանջների խախտմամբ, բացի այդ, տնտեսվարողների կողմից թույլ է տրվել պայմանագրի պահանջների խախտում: Մասնավորապես.

ՀՀ կառավարության 29.07.2010թ թիվ 971-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 29-րդ կետի պահանջների խախտմամբ, այն է՝ առանց սահմանված չափի հողի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքի պետական գրանցման վկայականների առկայության կամ այլ

անձանց անվամբ ներկայացրած վկայականների հիման վրա, թվով 17 փոխառումների տրամադրվել է ՌԴ-ից ներկրված 95 143 կգ սերմացու, իսկ թվով 7 փոխառումների տեղական արտադրության 8 588 կգ սերմացու:

Մեկ քաղաքացու հետ կնքվել է պայմանագիր և տրամադրվել է 45տ սերմացու ՍՊ ընկերությանը պատկանող հողերի վկայականների հիման վրա:

ՊՈԱԿ-ի կողմից իրականացրած փաստացի ցանքի ստուգումներով արձանագրվել է, որ 27 փոխառումների կողմից թույլ է տրվել պայմանագրային պարտավորությունների էական խախտումներ, այն է՝ ստացած 138 տոննա սերմացուն չի ցանվել նախօրոք ներկայացրած և ընտրված 460 հա հողատարածքներում:

Բացի այդ, սերմացուն պահեստավորելու, բեռնելու, բեռնաթափելու և ՀՀ մարզկենտրոններ տեղափոխելու համար հատկացված միջոցների հաշվին մատուցված ծառայությունների դիմաց կատարվել է ավելի վճարումներ: Մասնավորապես՝ վարձակալված տարածքների համար պայմանագրով նախատեսված վարձավճարից ավելի է վճարվել 500.0 հազ. դրամ, վագոններ բեռնաթափող բանվորներին բեռնաթափման համար ավելի է վճարվել 424.0 հազ. դրամ, պայմանագրերով նախատեսված վագոնների բեռնաթափման, սերմացուն ՀՀ մարզկենտրոններ տեղափոխելու ծառայությունների դիմաց պայմանագրային գներից ավելի է վճարվել 2,299.0 հազ. դրամ:

Սերմարտադրությունը կատարվում է «Սերմերի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Սերմերի հավաստագրման կարգի» պահանջների խախտումներով՝ սերմացու ստացած տնտեսվարող սուբյեկտները, չնայած նրան, որ ցանքսը կատարել են դեռևս 2010թ.-ի աշնանը, ստուգման օրվա դրությամբ դեռևս գրանցված չէին որպես սերմարտադրողներ և չէին իրականացրել օրենքով սահմանված գործառույթներից և ոչ մեկը:

IV. Հայաստանի Հանրապետությունում 2011թվականի գարու արտադրության զարգացման ծրագիր

ՀՀ կառավարության 24.02.2011թ. թիվ 280-Ն, 17.02.2011թ. թիվ 279-Ն և 31.03.2011թ.-ի թիվ 330-Ն որոշումներով հաստատվել են եգիպտացորենի արտադրության զարգացման, գարու արտադրության և սերմարտադրության զարգացման ծրագրերը, որոնցով ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը թույլատրվել է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի միջոցով Ուկրաինայի հանրապետության «Սելենա» ՓԲԸ-ից և «Նացիոնալ» մասնավոր կազմակերպությունից ձեռք բերել և ՀՀ ներմուծել 63 տոննա եգիպտացորենի սերմացու, 2019.135տոննա զարնամացան գարու

Էլիտային և առաջին վերարտադրության սերմացու, որից 946.055տ առաջին վերարտադրության սերմացու և 1073.08տ էլիտային վերարտադրության սերմացու:

Ծրագրերով նախատեսվել է չափորոշիչներ, ըստ որի սերմացուն պետք է հատկացվեր 0.3հա-ից ավելի հողատարածք ունեցող տնտեսվարողներին, որտեղ 2010թ.-ին չպետք է ցանված լինի հացահատիկային սերմացու:

«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից Ուկրաինայի հանրապետության «Սելենա» ՓԲ ընկերությունից և «Նագիոնալ» մասնավոր կազմակերպությունից ձեռք է բերվել և ՀՀ ներմուծվել զարմանացան գարու էլիտային և առաջին վերարտադրության 2019.735 տ. սերմացու, որը սահմանված չափաքանակներով տրամադրվել է ՀՀ մարզերին և ԼՂՀ-ին:

Գարմանացան գարու սերմացուի ձեռքբերման և բաշխման գործընթացի ուսումնասիրությունից պարզվել է, որ

- 13534կգ սերմացուն տրամադրվել է հողի սեփականության կամ վարձակալության այն վկայականների հիման վրա, որոնցով տնտեսվարող սուբյեկտները դեռևս 2010թ.-ի աշնանը ստացել և այդ հողամասերում ցանել են «2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության զարգացման ծրագիր» շրջանակներում ՌԴ-ից ներկված աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացուն:

- 1256կգ սերմացուն տրամադրվել է առանց հողի նկատմամբ սեփականության կամ վարձակալության իրավունքի պետական գրանցման վկայականների առկայության:

- Երկու դեպքով տնտեսվարող սուբյեկտներին տրված սերմացուն 1140կգ-ով գերազանցում է հողի նկատմամբ սեփականության կամ վարձակալության վկայականներում նշված հողատարածքների համար նախատեսված սերմացուի չափը:

«Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից սերմացու տեղափոխող վարորդներին փաստացի կատարած աշխատանքներից ավելի է վճարվել 280.5 հազ. դրամ:

V. Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական

կառուցվածքների վերականգնում

Ծրագրի նպատակն է գետերի հունների մաքրման և ափերի ամրացման աշխատանքների միջոցով հողօգտագործումից ստացվող արդյունքի բարելավում և/կամ այդ բնագավառում կորուստների նվազեցում:

Ծրագրով նախատեսվել է թվով 10 օբյեկտներում իրականացնել գետերի հունների մաքրման և ափերի ամրացման աշխատանքներ:

Նախագծերի կազմման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ նախագծերը կազմվել են բազմաթիվ թերություններով, ինչի արդյունքում շինարարական աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել լրացուցիչ կատարման ենթակա աշխատանքներ և նախագծերը մի քանի անգամ ենթարկվել են փոփոխությունների:

Նախահաշիվների կազմման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ թվով 9 օբյեկտների նախահաշիվներում, գաբիտների քարերի գինը սահմանված կարգով հաշվարկելու փոխարեն հաշվարկվել են առանձին բաղադրիչներով՝ գրունտի պայթեցում, փխրեցում, բարձում և տեղափոխում, հաշվարկներում օգտագործվել են ՀՀ-ում չգործող նորմատիվային փաստաթղթերում նշված նորմատիվային ծախսեր և ժայռային գրունտով ափերի ամրացման աշխատանքներում սահմանվածից ավելի է ընդունվել ժայռային գրունտի ծախսի նորման: Նշված խախտումների արդյունքում նախահաշվային արժեքները ավել են հաշվարկվել 86,963.1 հազ. դրամով, որից 2009թ.-ին 47,674.5 հազ. դրամով և 2010թ.-ին՝ 39,288.6 հազ. դրամով:

2009-2010թթ. թվով 6 օբյեկտներում շինարարական և վերանորոգման աշխատանքներ են իրականացվել մաս ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին

Նշված թվով 6 օբյեկտներից թվով 3-ում իրականացվել են գետերի հունների մաքրման և ափերի ամրացման, մնացած 3-ում խմելու ջրագծի, ոռոգման ցանցի կառուցման և վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ:

Նախահաշիվների կազմման ճշտության ստուգմամբ պարզվել է, որ թվով 4 օբյեկտներում թույլ են տրվել մույն խախտումները, ինչ որ թույլ են տրվել «Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և իմժեներական կառուցվածքների վերականգնում» ծրագրի շրջանակներում, ինչի արդյունքում նախահաշվային արժեքները ավել են հաշվարկվել 59,981.2 հազ. դրամով, որից 2009թ.-ին 32,532.4 հազ. դրամով և 2010թ.-ին 27,448.8 հազ. դրամով:

Ընտրանքային կարգով Հրազդանի անտառտնտեսության վարչական շենքի վերանորոգման և Կապուտան համայնքի հեղեղատարների հունների մաքրման և ափերի ամրացման 19,060.0 հազ. դրամի աշխատանքների չափազրոյություններից պարզվել է, որ թույլ է տրվել 1,794.0 հազ. դրամի հավելագում, որից 1,535.0 հազ. դրամ «Տիրանուն» ՍՊԸ-ի կողմից և 259.0 հազ. դրամ «Աննար» ՍՊԸ-ի կողմից: Ափապաշտպան կառույցներում կատարված շրջայցից պարզվել է, որ ափապաշտպան կառույցները (գաբիտների շարք և Գ-ա տիպ երկաթբետոնյա կոնստրուկցիաները) որոշ տեղերում արդեն մատվածք են տվել, իսկ առանձին տեղերում մույնիսկ ամբողջովին քանդվել են, ինչի պատճառը կարող է լինել թե այն, որ աշխատանքներն իրականացվել են ոչ պատշաճ

որակով և թե այն որ Հանրապետությունում նախատեսված չէ, հետևաբար նաև չի իրականացվում ավիապաշտպան կառույցների շահագործման և սպասարկման աշխատանքներ:

VI. Բույսերի պաշտպանության միջոցառումներ

Ծրագիրը նախատեսվել է իրականացնել երեք բաղադրիչներով.

2009-2010թ.թ. կապալառու կազմակերպությունների միջոցով իրականացվել է մորեխների դեմ կենտրոնացված պայքար՝ համապատասխանաբար 4836հա-ի վրա, մկնամման կրծողների դեմ կենտրոնացված պայքար՝ համապատասխանաբար 9216.0 հա-ի և 3000 հա-ի վրա: 2009թ.-ին իրականացվել է նաև ավիացիոն քիմիական պայքար:

Բացի կենտրոնացված պայքարը, գյուղացիական տնտեսությունների միջոցով մկնամման կրծողների դեմ պայքար իրականացնելու համար 2009-2010թթ.-ին մարզպետարաններին հատկացվել է ցինկի ֆոսֆիդ համապատասխանաբար 9150 կգ և 17118 կգ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ համաձայն ՀՀ կառավարության 03.07.2008թ.-ի թիվ 704-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության 2009-2011 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ), մորեխների դեմ պայքարը պետք է իրականացվեր ավիացիայի միջոցով, այնինչ իրականացվել է տրակտորների միջոցով: Բացի այդ, մկնամման կրծողների դեմ պայքարը պետք է իրականացվեր գյուղացիական տնտեսությունների միջոցով, պետության կողմից տրամադրված թունաքիմիկատներով, յուրաքանչյուր տարի 171 280 հա-ի վրա, այնինչ փաստացի 2009թ.-ին պայքար իրականացվել է ընդամենը 82 416 հա-ի վրա, իսկ 2010թ.-ին 139 944 հա-ի վրա, ինչը հետևանք է մրա, որ խախտելով վերը նշված ՄԺԾԾ-ի պահանջները, 2009թ.-ին 9216 հա-ի և 2010թ.-ին 3000 հա-ի վրա պայքարն իրականացվել է ոչ թե գյուղացիական տնտեսությունների միջոցով այլ կենտրոնացված կարգով՝ կապալառու կազմակերպությունների միջոցով: Կապալառու կազմակերպությունների փոխարեն գյուղացիական տնտեսությունների միջոցով պայքար իրականացնելու դեպքում հնարավոր կլիներ իրականացնել պայքար ևս 185 560 հա-ի վրա:

Գյուղացիական տնտեսությունների միջոցով պայքար կազմակերպելու համար մարզպետարաններին ցինկի ֆոսֆիդը տրամադրվել է մեկ հեկտարի վրա պայքար իրականացնելու համար 125 գրամ հաշվարկով: Նշված ծախսի նորման համատարած պայքարի համար հաշվարկված նորման է, որը իր հերթին աղոթարացված է միայն 1հա-ի վրա 300 և ավելի գործող բնանցքների առկայության դեպքում: Համատարած պայքարը նախատեսվել է իրականացնել միայն կենտրոնացված կարգով՝ կապալառու կազմակերպությունների կողմից վարելահողերի հարակից տարածքներում մեքենայացված պայքարի ժամանակ: Համաձայն մկնամման կրծողների դեմ

պայքարի ձեռնարկների և Միացյալ ազգերի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության 2005թ.-ի մկնամնամ կրծողների դեմ պայքարի համառոտ ձեռնարկի, 1հա-ի վրա մինչև 300 գործող բնանցքի դեպքում պետք է իրականացվի պայքար բնանցքային մեթոդով, որի դեպքում, առավելագույն անցքերի քանակի հաշվարկով, ցինկի ֆոսֆիդի ծախսի նորման 1 հա-ի համար կազմում է ընդամենը 50 գրամ:

2009-2010թ.թ-ին գյուղացիական տնտեսությունների միջոցով պայքար է իրականացվել համապատասխանաբար՝ 73200 հա և 136944 հա ցամքատարածքներում, որի համար մարզպետարաններին տրամադրվել է 26268 կգ ցինկի ֆոսֆիդ, այնինչ համաձայն նորմերի պետք է տրամադրվեր 10507կգ, կամ նորմաներից ավել է տրամադրվել 15761 կգ կամ հատկացված ցինկի ֆոսֆիդով հնարավոր էր իրականացնել պայքար 2.5 անգամ ավելի շատ տարածքներում՝ 2009թ.-ին 183 000 հա-ի վրա, իսկ 2010թ.-ին 342 360 հա-ի վրա:

2010թ.-ին մկնամնամ կրծողների դեմ 3000 հա-ի վրա կենտրոնացված պայքարն իրականացվել է թվով 16 համանքներում, որոնցից 4-ում (797 հա) ընդհանրապես մոնիտորինգ իրականացված չի եղել:

2009-2010թ.թ. Գյուղատնտեսության նախարարությունը ստացված ցինկի ֆոսֆիդը ի պահ է հանձնել, պահեստավորվել ու բաշխել է «Ագրոքիմիական ծառայություն» ՊՈԱԿ-ի բուսասանիտարական նորմերին չհամապատասխանող պահեստից՝ ավտոտնակից, ինչով խախտել է բուսասանիտարիայի մասին օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը, որով արգելվում է բուսասանիտարական նորմերին չհամապատասխանող պահեստներում և շինություններում բուսանյութերի և կենսապատվաստուկների պահպանումը:

VII. Բույսերի կարանտինի և գյուղմշակաբույսերի բուսասանիտարական վիճակի մոնիտորինգի լաբորատոր փորձաքննությունների հիման վրա կանխարգելիչ և ախտորոշիչ ծառայությունների իրականացում

Ծրագրի նպատակն է հետազոտությունների և դիտարկումների հիման վրա կարանտին օրգանիզմների արեալի ճշտում, դրանց բազմացման ու զարգացման կանխատեսում, ախտորոշում և ահազանգում: Բույսերի պաշտպանության բնագավառում պետական ծրագրերի մշակումը և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև հանրապետություն ներկրվող և հանրապետությունում օգտագործվող բուսանյութերի որակի նկատմամբ հսկողության ապահովումը:

Ծրագրով նախատեսվել է իրականացնել հետևյալ ծառայությունները՝ բուսասանիտարական մոնիտորինգ, փորձանմուշների փորձաքննություն և բուսանյութերի լաբորատոր փորձաքննություն:

Ծրագիրն իրականացրել է «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը:

Բուսասանիտարական մոնիտորինգ

Մոնիտորինգն իրականացվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 26.07.2005թ 122-Ա հրամանի և պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1-ի մի շարք կետերի խախտումներով՝ չի կատարվել քարտեզագրում, պայքարի միջոցառումների տեղը չի որոշվել առավել վարակված համայնքների սկզբունքով, արդյունավետության հաշվարկը մի շարք մարզային տեսուչների կողմից կատարվել են առանց պայքարից առաջ գործող քնննքների հաշվարկի, չեն կատարվել վնասված տարածքների սահմանների որոշում, վտանգի վերլուծություն և արեալների ճշտում: Վերջիններիս չկատարման արդյունքում չի ապահովվել ծրագրի հիմնական նպատակներից մեկը՝ մոնիտորինգի արդյունքների հիման վրա բույսերի պաշտպանության միջոցառումների իրականացման հաջորդ տարվա ծրագրերի կազմումը:

Մոնիտորինգի տվյալների վերլուծությունից պարզվել է, որ 2009թ.-ին մոնիտորինգի ենթարկված 224095 հա գյուղատնտեսական նշանակության հողատարածություններից 179685 հա-ի վրա, իսկ 2010թ.-ին 198000 հա-ից 151991 հա-ի վրա իրականացվել է մկնանման կրծողների և մորեխների մոնիտորինգ, այն դեպքում, որ թե մեկը և թե մյուսը ներառված չեն ՀՀ գյուղատնտեսության նախարարի 23.08.2007թ.-ի թիվ 188 հրամանով հաստատված 11 ամուն կարանտին օրգանիզմների ցանկում:

2010թ.-ին մկնանման կրծողների մոնիտորինգ է իրականացվել 111626 հա-ի վրա, սակայն մկնանման կրծողների դեմ պայքար է տարվել 139944 հա-ի վրա կամ ընդհանրական տվյալներով 28318 հա-ի վրա պայքար իրականացվել է չունենալով մոնիտորինգի տվյալ:

Բացի այդ պետք է նշել, որ մնացած 111626 հա-ի վրա իրականացրած պայքարը չի համապատասխանել մոնիտորինգի ենթարկված տարածքներին: Օրինակ՝

- Գեղարքունիքի մարզում 2009թ.-ի աշնանը մոնիտորինգ է արվել 22 համայնքում, պայքար է իրականացվել 12 համայնքում, որոնցից միայն 3-ում (1200հա) կա մոնիտորինգի տվյալներ: 2010թ.-ի աշնանը պայքար է իրականացվել թվով 28 համայնքներում 10200 հա-ի վրա, սակայն նշված համայնքներից 20-ում (7200 հա) մոնիտորինգ իրականացված չի եղել, իսկ մոնիտորինգ իրականացված 9 համայնքներում (1164 հա) ուժեղ վարակվածություն պարագայում պայքար չի իրականացվել:

2009-2010թթ.-ին իրականացվել է մաս 90419 հա բանջարաբուստանային մշակաբույսերի, պտղատու այգիների և հացահատիկային կուլտուրաների մոնիտորինգ, իսկ 2010-ին 46009 հա, սակայն մոնիտորինգի արդյունքներով որևէ միջոցառում չի նախատեսվել և չի իրականացվել:

Փորձանմուշների փորձաքննություն

Ուսումնասիրությունից պարզվել է, որ մմուշառումներ կատարվել են բոլոր մարզերից, սակայն գերակշռող մասը (շուրջ 50%) կատարվել են մայրաքաղաքից և մոտակա մարզերից՝ Արմավիրից և Արարատից: Ընդ որում, բացակայում են մմուշառման ակտերը, չկա որևէ ուղեկցող փաստաթուղթ, որտեղ նշված լինի մմուշառում կատարող անձի անունը, մմուշառում կատարելու տեղամասը և մմուշների քանակը:

Չնայած նրան, որ 2009-2010թթ 35 դեպքով արձանագրվել է 4 անուն կարանտին օրգանիզմներ, դրանցից միայն 1 անուն կարանտին վնասատուի (ֆիլոքսերա) դեպքում է նախատեսվել Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի տարածքում կարանտին միջոցառումների իրականացում, այն էլ առանց տեսուչության կողմից իրականացրված մոնիտորինգի և դրա արդյունքում տրված եզրակացության առկայության: Մնացած դեպքերում գյուղատնտեսության նախարարության կողմից ոչ մի միջոցառում չի ձեռնարկվել:

Գայի գյուղական համայնքի տարածքում կարանտին միջոցառումներն իրականացվել են ՀՀ կառավարության 03.12.2009թ.-ի թիվ 1443-Ն որոշմամբ, «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների հաշվին

Ստուգմամբ պարզվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի միջև կնքված միջոցառումների իրականացման պայմանագրով խախտվել են ՀՀ կառավարության վերը նշված որոշման պահանջները, այն է՝

- պայմանագրով նախատեսվել և համաձայն հաշվետվությունների կատարվել են թվով 5 մարզերում մոնիտորինգի իրականացման աշխատանքներ, այն դեպքում, երբ մոնիտորինգի իրականացումը կարանտին միջոցառում չի նշանակում: Հատկացված գումարներից 3,695.4 հազ. դրամն ուղղվել է մոնիտորինգ իրականացնելու համար տրամապորտային նյութերի և քսայուղերի ձեռքբերմանը:

- Պայմանագրով նախատեսվել և համաձայն հաշվետվությունների իրականացվել է 930.0 հազ. դրամի մեքենաների ընթացիկ նորոգման աշխատանքներ և սառնարանի ու համակարգիչների ձեռքբերում, որոնք որևէ կապ չունեն կարանտին միջոցառումների հետ:

- ՀՀ կառավարության որոշմամբ բույսերի կարանտին սահմանվել է ՀՀ Արմավիրի մարզի Գալի գյուղական համայնքի տարածքում, սակայն տեղում կատարված շրջայցից պարզվել է, որ փաստացի միջոցառումներով (ուղեփակոցի տեղադրում, մուտքի ու ելքի նկատմամբ վերահսկողություն և այլն) ներգրավվել են ոչ թե ողջ համայնքի տարածքը, այլ միայն տվյալ կարանտին վնասակար օրգանիզմներով վարակված այգիների տարածքները: Հարկ է նշել, որ ծրագրով նախատեսվել էր քանդել 30800քմ այգի, այնինչ քանդվել է ընդամենը 7500քմ:

- Խախտվել է 03.12.2009թ-ի N 1443-Ն կառավարության որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը, այն է՝ ստեղծված ժամանակավոր աշխատանքային խմբերում չեն ընդկրգվել «Հայաստանի պետական ագրարային համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնագետները՝ հանրապետության յուրաքանչյուր խաղողագործական շրջաններում ընտրանքային հետազոտություններ իրականացնելու համար:

- Խախտվել են 18.05.2009թ. «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ կետի և 19-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի պահանջները, այն է՝ չի արգելվել կամ սահմանափակվել կարանտին սահմանված գոտուց բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների արտածումը, ինչպես նաև դրանց հետ առնչվող փոխադրամիջոցների ելքն ու մուտքն առանց բուսասանիտարական հավաստագրի կամ բուսասանիտարական ամձնագրի:

- Խախտվել է 18.05.2009թ. «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջը, այն է՝ բույսերի կարանտինի սահմանման և կարանտինի չեղյալ հայտարարման մասին տեղեկությունները չեն հայտարարվել ռադիոյի, հեռուստատեսության, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով:

Չնայած նրան, որ հատկացված գումարները, բացի խաղողագործներին փոխհատուցման համար նախատեսված 2,786.2 հազ. դրամից 2,127.6 հազ. դրամը, ամբողջովին ծախսվել են, մինչ օրս օջախը չի ոչնչացվել, կարանտինը չեղյալ չի հայտարարվել:

Թունանյութերի լաբորատոր փորձաքննություն

2009-2010թթ.-ին Բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչության կողմից թվով 184 նմուշառում (2009թ. 134 նմուշառում և 2010թ. 50 նմուշառում), որոնց փորձաքննության համար վճարվել է 828.0 հազ. դրամ, կատարվել են այնպիսի վաճառքի կետերից, որոնք չեն ունեցել թունանյութերի վաճառքով զբաղվելու համար օրենքով նախատեսված լիցենզիա: Բացի այդ 2 դեպքով (7հատ նմուշ) նմուշառում կատարվել է ոչ թե վաճառքի կետերից, այլ հողամասից:

2009թ.-ին գրանցված և լիցենզավորված թվով 50 վաճառքի կետերից նմուշառումներ կատարվել են ընդամենը թվով 27 վաճառքի կետերից, իսկ թվով 23 վաճառքի կետերից որևէ նմուշառում չի կատարվել:

2010թ.-ին գրանցված և լիցենզավորված թվով 67 վաճառքի կետերից մնուշառումներ կատարվել են ընդամենը թվով 38 վաճառքի կետերից, իսկ թվով 29 վաճառքի կետերից ուրևէ մնուշառում չի կատարվել:

VIII. Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների լաբորատոր ախտորոշման և կենդանական ծագում ունեցող հումքի և մյուս փորձաքննության միջոցառումներ

Ծրագրի իրականացման մպատակն է՝ կենդանիների վարակիչ հիվանդությունների հակահամաճարակային վիճակի բարելավումը, մարդու և կենդանիների համար հիվանդություններից բնակչության պահպանումը:

Ծրագիրն իրականացրել է «Հանրապետական ամասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ը:

2009-2010թ.թ. պատվիրվել է իրականացնել համապատասխանաբար 941502 հատ և 901000 հատ փորձաքննության միջոցառում:

Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի հակաամասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների արդյունավետ իրականացման համար նախատեսվել է բրոցելյոզի նկատմամբ խոշոր եղջերավոր կենդանիների արյան մուշմների հետազոտություն իրականացնել տարին երկու անգամ 6 ամսյա հաճախականությամբ, իսկ մանր եղջերավորներին տարին մեկ անգամ:

2009-2010թթ. ամասնաբույժերի կողմից բրոցելյոզի նկատմամբ խոշոր եղջերավոր կենդանիների արյան մնուշառումների քանակները ըստ տարածաշրջանների և ժամանակահատվածների համադրելով Ազգային վիճակագրական ծառայության տրամադրած և հենց նույն ամասնաբույժերի կողմից հաշվառված և ծխամատյաններում լրացված ամասնագլխաքանակների հետ, պարզվել է որ 2009թ.-ին 60145 հատ և 2010թ.-ին 41859 հատ մնուշառումներ կատարվել են վերը նշված հաճախականության խախտմամբ և չեն ապահովել անհրաժեշտ արդյունավետություն: Այսպես խոշոր եղջերավոր կենդանիների արյունը մնուշառվել է տարին երկու անգամ, սակայն երկուսից երեք ամսվա ընթացքում, իսկ մանր եղջերավորների արյան մնուշառումներ կատարվել են տարին երկու անգամ:

«Հանրապետական ամասնաբուժական հակահամաճարակային և ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից, **ՀՀ կառավարության պահուստային ֆոնդի միջոցների հաշվին**, իրականացվել է նաև Ձերմուկ քաղաքի տարածքում մոծակների դեմ պայքարի միջոցառումները:

Ուսումնասիրմամբ պարզվել է. որ ախտահանիչ միջոցառումներ իրականացնելու համար օգտագործված 1300լ Դիագոն-600 թունաքիմիկատը ձեռք է բերվել «Աղավնի Չիլյան» Ա/Չ-ից, ով չի

ունեցել թունաքիմիկատների վաճառքով զբաղվելու լիցենզիա, ավելին, տվյալ թունաքիմիկատը գրանցված չէ Անասնաբուժական դեղամիջոցների պետական գրանցամատյանում: Ընդ որում, այն օգտագործվել է Ջերմուկ քաղաքի բաց տարածքներում ցողելու միջոցով ախտահանումներ կատարելու համար, այն դեպքում, որ տվյալ թունաքիմիկատի օգտագործումը բաց միջավայրում արգելվում է:

IX. Ճապոնիայի կառավարության աջակցությամբ իրականացվող «Պարենային արտադրության ան» ծրագրի շրջանակներում հակակարկտային կայանների տեղակայում

Աշխատանքներն իրականացվել են ՀՀ կառավարության 2008թ.-ի սեպտեմբերի 18-ի թիվ 1253-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ տարածքում մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համակարգ ստեղծելու ծրագրի» շրջանակներում:

Ծրագրով կարկտի դեմ պայքարի գոյություն ունեցող մեթոդներից Հանրապետությունում նպատակահարմար և ընդունելի են համարվել ացետեխնոլ գործող գազագեներատորային մեթոդի (մինչև 50% արդյունավետություն, պաշտպանվող տարածքը 80հա) և քիմիական ռեագենտով գործող (Ֆրանսիական) գեներատորային մեթոդների (մինչև 45% արդյունավետություն, պաշտպանվող տարածքը 670հա) կիրառումը: Վերջինով նախատեսվել է նաև լրացուցիչ տեղումների՝ անձրևի և ձյան ստացումը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 2009թ.-ին մրցույթի արդյունքում, իսկ 2010թ.-ին մեկ անձից գնման ձևի կիրառմամբ 28 հատ և 48 հատ կայանների տեղակայման աշխատանքների պայմանագրեր է կնքվել «Պոստ Լեքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ի հետ:

Ստուգմամբ պարզվել է, որ

- Ծրագրով նախատեսված 14 հատ Ֆրանսիական ռեագենտով գործող գեներատորային կայաններից, որոնք տեղադրված գազագեներատորային կայաններից կրկնակի էժան են, պաշտպանում են 8 անգամ ավելի մեծ տարածք (կամ 1 հա պաշտպանվող տարածքի հաշվարկով էժան են 16 անգամ) և որոնց տեղադրմամբ պետք է ապահովվեր լրացուցիչ տեղումների՝ անձրևի, ձյան ստացումը, ոչ մի հատ չի տեղադրվել:
- Կառուցված կայանները առ այսօր չեն անցել միջգերատեսչական բազմաբնույթ փորձարկումներ և որոշված չէ այդ կայանների հիմնական տեխնիկական բնութագրերը: Ոչնչով չի հիմնավորվում կայանների արդյունավետության տոկոսաչափերը, պաշտպանվող տարածքի (մակերեսի) չափը, էկոլոգիական անվտանգությունը (այդ թվում թռչունների նկատմամբ), ուսումնասիրված չէ կայանների ազդեցությունը ներգործության գոտին հատող թռչող ապարատների վրա:

- Չկա կայանների միջոցով ամպերի վրա ազդելու (կրակելու) հաստատված կանոնակարգ կամ մեթոդիկա:

- Նվազագույն քանակությամբ կայանների տեղադրմամբ առավելագույն բարձր արդյունավետություն ստանալու ուղությամբ որևէ աշխատանք չի իրականացվել: Չեն կատարվել պաշտպանվող տարածքների աշխարհագրական և բնակլիմայական բնութագրիչների ուսումնասիրություններ և որոշված չեն ծրագրով նախատեսված կայանների տեղադրման վայրերը: Կայանների տեղադրման վայրերի ընտրությունները ոչնչով չեն հիմնավորվել:

- 2009թ.-ին «Պոստ Լեքս Զոնսալֆինգ» ՍՊԸ-ի հետ դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է ՀՀ կառավարության 24.12.2003թ.-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման» կարգի 37-րդ կետի պահանջի խախտմամբ, պայմանագրում չի նշվել ակնկալվող արդյունքը և դրա գնահատման չափորոշիչները:

- Նախագծա-նախահաշվային փաստաթղթերը չեն համապատասխանեցրել ՀՀ ԱԻՆ Հայաստանի Փրկարարական Ծառայության պետական հրդեհային տեսչության՝ նախագծային փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո ներկայացված պահանջներին, բացի այդ դրանք կազմվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 757 հոդվածի 1-ին կետի, 759 հոդվածի 1-ին կետի, Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 17-րդ կետի, 16-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 21.12.1998թ թիվ 812 որոշմամբ հաստատված «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխության» կարգ-ի 3-րդ, 5-րդ, 8-րդ կետերի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.07.08թ.-ի թիվ 41-ն հրամանով հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման կարգ»-ի 4-րդ մասի 7-րդ կետի պահանջների խախտմամբ՝ չեն կազմվել ճարտարապետահատակագծային և նախագծային առաջադրանքներ, 2009թ.-ին չի կազմվել նախահաշիվ, նախագծերում բացակայում են տեխնոլոգիական մասերի լուծումները, նախահաշիվները կազմվել են սահմանված կարգի պահանջների խախտմամբ:

- 2010թ.-ի պայմանագրի շրջանակներում աշխատանքներն իրականացվել են Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ ենթաբաժնի թ) կետի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանով հաստատված «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման» կարգի պահանջների խախտմամբ՝ առանց աշխատանքների որակի պատշաճ տեխնիկական վերահսկողության: Տեխնիկական հսկողության աշխատանքների պայմանագիրը կնքվել է շինարարական աշխատանքները սկսելուց երեք ամիս անց, երբ աշխատանքները հիմնականում արդեն ավարտված են եղել:

- 2010թ.-ին բաց նպատակային մրցույթ անկացնելու փոխարեն, գյուտի նախնական արտոնագրի հիման վրա (ինչը համաձայն «Գյուտերի մասին» ՀՀ օրենքի և «Մտավոր

սեփականության գործակալության» կողմից տրված պարզաբանման չի հանդիսանում բացառիկ իրավունքի օբյեկտ), «Պոստ Լեքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ի հետ պայմանագիրը կնքվել է մեկ անձից գնման մեթոդով:

- 2009թ.-ի պայմանագրի շրջանակներում նախագծային ծավալների փոփոխությունները կատարվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 742 հոդվածի և ՀՀ կառավարության 05.06.2008թ թիվ 853-Ն որոշման պահանջների խախտմամբ: Ավելի բարձր նախահաշվային արժեք ունեցող աշխատանքները փոխարինվել են ավելի էժան նախահաշվային արժեք ունեցող աշխատանքներով, սակայն պայմանագրի միավոր գները համամասնորեն չեն նվազեցվել, իսկ առանձին դեպքերում նույնիսկ ավելացվել են ինչի արդյունքում ավել է վճարվել 5,224.8 հազ. դրամ:

- Տեղում կատարված հսկիչ չափագրություններից պարզվել է, որ 2009թ.-ի 30,185.6 հազ. դրամի աշխատանքներում թույլ է տրվել 5,590.6 հազ. դրամի ծավալային հավելագրում, իսկ 2010թ.-ին 60,735.4 հազ. դրամ աշխատանքներում՝ 9,967.7 հազ. դրամի ծավալային հավելագրում:

Բացի այդ, «Պոստ Լեքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ում կատարված հանդիպակաց ստուգմամբ պարզվել է, որ.

- Փաստաթղթերով չեն հիմնավորվում 2009թ.-ին 1,745.7 հազ. դրամի և 2010թ.-ին 7,958.3 հազ. դրամի ծածկված աշխատանքների (հիմքերի բետոնացման և ամրանավորման) կատարումը:

- Տեղում տեղադրվել են սերտիֆիկատում նշված ռադիոկայանին և մոդեմին չնամասպատասխանող ռադիոկայան և մոդեմ:

- Բացակայում են օգտագործված շինվածքների, նյութերի, կոնստրուկցիաների և ինժեներական սարքավորումների որակը հաստատող սերտիֆիկատները, անձնագրերը, լաբորատոր փորձարկումների և անալիզների արդյունքները:

X. «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում»

Ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետությունում անասնահամաճարակային կայուն իրավիճակ ստեղծելու և պահպանելու համար հանրապետությունում ամենամյա հակաանասնահամաճարակային միջոցառումներ իրականացումը:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ չնայած նրան, որ եռակողմ պայմանագրերը անասնաբույժների հետ կնքվել, աշխատավարձերը հաշվարկվել և վճարվել են հունվար ամսից, պատվաստման և ախտորոշման աշխատանքները փաստացի կատարվել են սկսած առաջին եռամսյակի վերջից:

Ուսումնասիրությունից պարզվել է նաև, որ խախտելով ՀՀ կառավարության 2005 թ.-ի հուլիսի 21-ի թիվ 1088-Ն՝ «Անասնաբուժության մեջ օգտագործվող կենսապատրաստուկների ներմուծման և արտահանման կարգը սահմանելու մասին» որոշման 12-րդ կետի և ՀՀ կառավարության 2004թ.-ի

սեպտեմբերի 9-ի թիվ 1335-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում անասնաբուժության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պետական գրանցման կարգի» 18-րդ կետի պահանջները, Տեսչության կողմից 01.04.2010թ.-ին «Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ին տրվել է ՀՀ-ու չարանցված «Պոկրովի կենսապատվաստուկների գործարան» ԲԲԸ-ի արտադրության հակադաբադային Ա, Օ, Ասիա I տիպերի (3մլ-ն մեկ դոզա չափաբաժնով) անասնաբուժական դեղամիջոցի ներմուծման հավաստագիրը, որի հիման վրա ներմուծվել է 1080400 դոզա պատվաստանյութ: «Կենսարդ» ՍՊԸ-ի կողմից ներմուծված, ՀՀ-ում պետական գրանցում չստացած «Խոճկորների սալմոնելյոզի, պաստերելյոզի և էմտերոկոկ ինֆեկցիայի դեմ պատվաստանյութ»-ին 30.04.2010թ.-ին տրվել է ՀՀ-ում գրանցված անասնաբուժական դեղամիջոցի՝ «Խոզերի սալմոնելյոզի, պաստերելյոզի և էմտերոկոկ ինֆեկցիայի դեմ պատվաստանյութ»-ի ներմուծման հավաստագիր:

ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1088-Ն որոշման 13-րդ կետի պահանջի խախտմամբ, առանց փորձաքննության անցկացման, տեսչության կողմից 2010թ.-ին տրվել է «Պարենի և գյուղատնտեսության» միջազգային կազմակերպության՝ FAO-ի (այսուհետ՝ FAO) կողմից ՀՀ գյուղատնտեսության մախարարությանը օգնության կարգով տրամադրված 698000 դոզա հակադաբադային պատվաստանյութերի ներմուծման թույլտվություն:

Տարեկան կատարողական հաշվետվությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ 2010թ.-ի տարեվերջին ունենալով 215550 դոզա պատվաստանյութի մնացորդ, պլանավորվածից պակաս է իրականացվել 72218 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների պատվաստում:

Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի հակաանասնահամաճարակային կանխարգելիչ միջոցառումների արդյունավետ իրականացման համար, պատվաստումից կենդանիների ձեռքբերած իմունիտետի տևողությունից ելնելով, մախատեսվել է դաբադի դեմ պատվաստումներն իրականացնել խոշոր եղջերավոր կենդանիներին՝ տարին երկու անգամ՝ 6 ամսյա հաճախականությամբ (հորթերինը տարին 3 անգամ), իսկ մանր եղջերավորներին՝ տարին մեկ անգամ:

2009-2010թթ. Տեսչության և անասնաբույժերի կողմից ներկայացրած դաբադի դեմ կատարված պատվաստումների քանակները ըստ տարածաշրջանների և ժամանակահատվածների համադրելով Ազգային վիճակագրական ծառայության տրամադրած և հենց նույն անասնաբույժերի կողմից հաշվառված և ծխամատյաններում լրացված անասնագլխաքանակների հետ, պարզվել է, որ 2009թ.-ին 23378 գլուխ և 2010թ.-ին 48920 գլուխ կենդանիների պատվաստումները, կատարվել են վերը նշված հաճախականության խախտմամբ՝ պատվաստումները կատարվել են տարին երկու անգամ, բայց ոչ թե 6 ամիսը մեկ, այլ երկու երեք ամսվա ընթացքում, ինչով և չեն ապահովել անհրաժեշտ արդյունավետություն:

2009թ.-ին հաշվառված մանր եղջերավոր կենդանիների գլխաքանակի և հաշվետվություններով ցույց տրված հակադաբադային պատվաստումների քանակների համադրումից պարզվել է, որ հաշվետվություններով հակադաբադային պատվաստումների տարեկան քանակը ավել է ցույց տրվել հաշվառված գլխաքանակից 46423 հատով:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է նաև 2009թ.-ի սերոմոնիտորինգի արդյունքները և պարզվել է, որ 2009թ.-ի առաջին կիսամյակում Լոռու, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերում, որտեղ իրականացվել է 240063 անասնագլխի պատվաստում և ծախս է ցույց տրվել 252066 դոզա պատվաստանյութ, վարակամերժության լարվածությունը /իմունիտետը/ կազմել է 20%-50% և գտնվել են ռիսկի գոտում:

2010թ.-ին չի իրականացվել «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով անասնաբուժական ծառայության հիմնական խնդիրներից մեկը համարվող կենդանիների սերոմոնիտորինգ՝ շիճուկաբանական հետազոտությունների վերլուծությունը, այսինքն՝ որևէ հսկողություն չի իրականացվել կատարված միջոցառումների արդյունավետության ուղղությամբ:

«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ում և «Կենսաարդ» ՍՊԸ-ում կատարված հանդիպակաց ստուգումներից պարզվել է, որ երկու ընկերություններում էլ չկան ՀՀ տարածքում պատվաստանյութերի և դեղամիջոցների փոխադրումները հիմնավորող փաստաթղթեր:

«Կենսաարդ» ՍՊԸ-ի կողմից 2009թ.-ի սեպտեմբեր և նոյեմբեր ամիսներին մատակարարվել է 15 լիտր սիբիրախտի դեմ շիճուկ՝ գումարով 792.0 հազ. դրամ, որը պետք է մատակարարվեր դեռևս 2009թ.-ի հունվարին և որը ձեռք է բերվել շուկայից՝ անհայտ անձից: Բացակայում է շիճուկի հավաստագիրը, որակի անձնագիրը և անհրաժեշտ ուղեկցող փաստաթղթերը:

«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ի կողմից 2009թ.-ի ապրիլի 17-ին մատակարարված 1200 դոզա հակադաբադային պատվաստանյութերը, գումարով 417.6 հազ. դրամի, ունեցել են մատակարարման պայմանագրին կից տեխնիկական բնութագրով սահմանվածից պակաս օգտագործման մնացորդային ժամկետ:

«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ն, չունենալով հակադաբադային պատվաստանյութի պահպանման համար պահանջվող ջերմային ռեժիմն ապահովող պայմաններ, 29.05.2009թ.-ին ներմուծած 248800 դոզա պատվաստանյութը ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հանձնել է 2009թ.-ի հունիսի 1-ին, իսկ 2009թ.-ի օգոստոսի 21-ին ներմուծած 623700 դոզա պատվաստանյութից 143850 դոզան՝ 2009թ.-ի սեպտեմբերի 1-ին:

FAO-ի կողմից տրամադրված 283000 դոզա հակադաբադային պատվաստանյութը, բեռի շուտ փչացող լինելու և պահպանման հատուկ կարիք ունենալու պատրվակով, դուրս է բերվել մաքսային

կետից և բեռնաթափվել և նախնական զննման է ենթարկվել Արարատի մարզի Արտաշատի սննդի անվտանգության և անասնաբուժական պետական կենտրոնում, որտեղ պահեստավորման և անհրաժեշտ ջերմային ռեժիմը ապահովելու որևէ պայման գոյություն չունի, և միայն 06.04.2010թ.-ին նշված պատվաստանյութը հանձնվել է «Հանրապետական Հակահամաճարակային ախտորոշիչ կենտրոն» ՊՈԱԿ-ի պահեստ:

«Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ի կողմից 2010թ.-ի ապրիլի 2-ին Նախարարությանը հանձնած, Ա, Օ, Ասիա1 տիպերի «Պոկրովի կենսապատվաստուկների գործարան» ԲԲԸ-ի արտադրության 1080400 դոզա և FAO-ի կողմից տրամադրված 643000 դոզա պատվաստանյութերի զտաքաշը, համաձայն արտադրողի կողմից ներկայացված դեղամիջոցի ծագման CT-1 ֆորմայի սերտիֆիկատի, փաթեթավորման թերթիկի և ավիաբեռագրի կազմում է 9886.9կգ, այնինչ ՀՀ մաքսային հայտարարագրում այն նշվել է 5254 կգ:

XI. Անտառապահական ծառայություններ

Ծրագիրն իրականացրել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ը:

Ծրագրերի համաձայն անտառապահականությունը, որը իր մեջ ներառում է նաև անտառային պետական ֆոնդը ապօրինի զավթումներից, ապօրինի հատումներից, արածեցումներից և հրդեհներից պահպանելը, պետք է իրականացվեր 2009թ.-ին 369400հա-ի վրա, իսկ 2010թ.-ին 343000հա-ի վրա այնինչ ուսումնասիրությամբ պարզվել է, որ Հանրապետության թվով 256 համայնքների վարչական սահմաններում գտնվող պետական անտառային հողերից 38169հա-ը համայնքների վարչական և կադաստրային քարտեզներով ներառվել են որպես համայնքային սեփականության ոչ անտառային հողեր:

2006թ.-2009թ.-երին կազմված թվով 15 անտառոտնետեսությունների անտառշինական նախագծերը (անտառկառավարման պլաները) ՀՀ գյուղատնտեսության նախարարի կողմից հաստատվել են միայն 2010թ.-ին: ՀՀ գյուղատնտեսության նախարարի կողմից հաստատված սանիտարական և խնամքի հատումների տարեկան ֆոնդի հաշվարկի համար 2009թ.-ին հիմք են հանդիսացել անտառոտնետեսությունների կողմից ներկայացված մասնագիտական եզրակացությունները, իսկ 2010թ.-ին վերը հիշատակված անտառկառավարման պլաները (անտառշինական նախագծերը): Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ համաձայն հաշվետվությունների

- 2009թ.-ին թվով 10 անտառոտնետեսությունների կողմից ներկայացված եզրակացություններում հատման ծավալը նշված չէ: Նախարարի կողմից ըստ անտառոտնետեսությունների հաստատված հատման ֆոնդը 1655խմ-ով գերազանցում է եզրակացություններում նշված ծավալը: Նախարարի կողմից հաստատված տարեկան ֆոնդից ըստ

մասնաճյուղերի ավել է հատվել 3940.8 խմ փայտ և մթերված փայտի ծավալը ըստ անտառտնտեսությունների 2972.8 խմ-ով գերազանցում է նույն անտառտնտեսությունների կողմից տրված եզրակացություններում նշված ծավալը:

- 2010թ.-ին Նախարարի կողմից ըստ անտառտնտեսությունների հաստատված հատման ֆոնդը 1178.2 խմ-ով գերազանցում է անտառշինական պլաներով սահմանված ծավալը: Մթերված փայտի ծավալը ըստ անտառտնտեսությունների և ըստ հատման տեսակների 4660.1 խմ-ով գերազանցում է անտառշինական պլաներով սահմանված ծավալները: Մթերված փայտի ծավալը ըստ անտառտնտեսությունների և ըստ հատման տեսակների 3959.2 խմ-ով գերազանցում է նախարարի կողմից հաստատված ֆոնդում սահմանված ծավալները: Սանիտարական և խնամքի հատումներից փաստացի մթերված 31533.7 խմ փայտի ծավալը 11889 խմ-ով գերազանցում է ըստ քառակուսիների և հատվածների անտառաշինական պլաներով սահմանված ծավալները:

- Համաձայն անտառշինական պլաներում սահմանված մթերված փայտից շինափայտի ելքի տոկոսների (ըստ քառակուսիների և տեղամասերի) սանիտարական և խնամքի հատումներից շինափայտի ծավալը կազմում է 5884.1 խխմ, այնինչ փաստացի մթերումը կազմել է 3731.3 խխմ:

- 2009-2010թ.թ.-ի թվով 15 անտառահատման տոմսերում բռնիտեստները (անտառի արտադրողականությունը բնութագրող ցուցանիշ) պակաս են ցույց տրվել անտառշինական պլաներում ցույց տրված բռնիտեստներից:

- 2009թ-2010թ.-ին անտառահատման տոմսերում հաշվարկվածից փայտի մթերումը պակաս է ցույց տրվել 495 խմ-ով:

- Միայն թվով 12 անտառտնտեսություններում առկա 973 հա խոտհարքի, 4530 հա արոտավայրի, շուրջ 2657 տ հատապտուղի պաշարի առկայության պայմաններում ոչ մի անտառային տոմս չի գրվել և դրամական մուտքեր չեն ապահովվել:

XII. Անտառապատման միջոցառումներ (Ճապոնիայի կատարության աջակցությամբ իրականացվող «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում)

«Հայանտառ» ՊՈԱԿ-ը նշված աշխատանքներն իրականացրել է 02.06.2009թ.-ին կնքված նվիրաբերության պայմանագրի հիման վրա, որի ուսումնասիրությունից պարզվել է, որ

- պայմանագրով նախատեսված և կատարողականներով վճարված սերմնաբուսակներից 216 720 հատը եղել են տնկման համար ոչ պիտանի:

- Հանձնաժողովի կողմից Բուժականի տարածաշրջանում կատարված շրջայցից պարզվել է, որ ծրագրի շրջանակներում անտառապատված տարածքներից 18 հա-ում առկա են ընդամենը բացված խրամատներ և որոշակի մասերում արդեն թեքված և ջարդված ցանկապատ, իսկ սերմնաբուսակներ ընդհանրապես չկան, այնինչ կատարողականներով վճարվել է 90 000 հատ

սոճենու սերմնաբուսակի տնկման աշխատանքների գումարով 9,467.0 հազ. դրամ: Հարկ է նշվել, որ մախագծով նշված տեղանքում անտառապատման աշխատանքներ մախատեսված չի եղել, այդ աշխատանքները պետք է կատարվեին Ծաղկաձորի անտառապետության տարածքում, սակայն Հրազդանի անտառտնտեսության տնօրենի մախաձեռնությամբ, առանց մախագծային փոփոխությունների և հիմնվոր հաշվարկների, այդ աշխատանքների կատարումը Ծաղկաձորից տեղափոխվել է Բուժականի տարածաշրջան:

XIII. Անտառավերականգնման և անտառաշինական աշխատանքեր

Ծրագիրն ունեցել է երկու բաղադրիչ՝ անտառավերականգնման աշխատանքներ, որն իրականացվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից և անտառաշինական մախագծերի կազմման աշխատանքներ, որն իրականացվել է «Սևադա և քույրեր» ՍՊԸ-ի կողմից:

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից կատարված անտառավերականգնման աշխատանքների ստուգումից պարզվել է, որ

- կատարողականներով ավել է վճարվել 54 310 հատ սերմնաբուսակի և 5 947 հատ խոշոր տնկիների համման և տնկման աշխատանքներ գումարով 378.05 հազ. դրամ:
- Անտառների լրացման համար օգտագործված 75 843 հատ սերմնաբուսակները եղել են տնկման համար ոչ պիտանի (մեկ տարեկանից բարձր տարիքի սերմնաբուսակներ):
- Տնկարանների հիմնման աշխատանքների ցանքսում 2009թ.-ին նորմաներից ավել ծախս է ցույց տրվել 1,142.7 կգ սերմ: 2010թ.-ին նշված տարբերությունը կազմել է 1,145.2 կգ:
- Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ 2008թ.-ի աշնանը, 2009թ.-ին և 2010թ.-ի գարնանը կատարած տնկարանների հիմնումից և լրացանքներից, ըստ նորմերի, պետք է ստացվեր 6 511 150 սերմնաբուսակ, այնինչ ցույց է տրվել ընդամենը 3 578 550 հատ սերմնաբուսակների ստացում:

Անտառային հողերի վարձակալություն

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի համաձայն, 01.04.2011թ. դրությամբ, առկա է կնքված անտառային հողերի վարձակալության 214 պայմանագրեր 24 566.58 հա տարածքով, որոնց տարեկան վարձավճարը կազմել է 46,179.9 հազ. դրամ: 31.12.2010թ. դրությամբ վարձավճարների գծով ապառքը կազմել է 52,299.4 հազ դրամ, իսկ ժամկետանց օրերի համար հաշվարկված տույժը՝ 37,807.5 հազ դրամ:

Պետական անտառային հողերի վարձակալության իրավունքը տրամադրվել է առանց հրապարակային սակարկությունների կամ մրցույթի, պայմանագրերը կնքվել են ուղղակի ձևով: 2009-2010թթ կնքվել է 72 պայմանագիր, իսկ նախկին կնքվածներից վերակնքվել 14-ը:

Անտառային հողերի վարձակալական պայմանագրերում կիրառվել է կետանցի յուրաքանչյուր օրվա համար չվճարված գումարի տուժանքի տարբեր դրույքաչափեր: Կնքված 140 պայմանագրերում նախատեսվել է տուժանք 0.1%, թվով 67 պայմանագրերում 0.5%, թվով 2 պայմանագրում 0.01 % և թվով 2 պայմանագրում 0.05%:

ՀՀ կառավարության 03.06.2010թ թիվ 668-ն որոշմամբ սահմանվել է պետական սեփականություն համարվող անտառների 1հա վարձավճարի տարեկան նվազագույն չափ, սակայն «Հայանտառ» ՊՈԱԿ-ը կնքված պայմանագրերի 3.2.2 և 3.4.2 կետերով նախատեսված ձևով չի տեղեկացրել վարձակալներին վարձավճարների փոփոխման վերաբերյալ և չի կնքել համապատասխան փոփոխությամբ պայմանագրեր: «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից վարձակալության պայմանագրերի վարձավճարները վերանայելու դեպքում, 01.05.2011թ.-ի դրությամբ՝ անցած 10 ամիսների ընթացքում լրացուցիչ կակնկալվել 203,205.8 հազ. դրամի եկամուտ:

XIV. Պետական սեփականության կառավարում և օգտագործում

ՀՀ գյուղատնտեսության նախարարության համակարգում ստուգվող ժամանակաշրջանում գործել է 100% պետական բաժնետոմսերով 16 բաժնետիրական ընկերություններ և 22՝ պետական ոչ առևտրային կազմակերպություններ:

Պետական ոչ առևտրային կազմակերպություններին անհատույց օգտագործման իրավունքով ամրացված գույքը մի շարք դեպքերում վարձակալության է հանձնվել ՀՀ կառավարության 13.06.2006թ.-ի թիվ 882-ն և 22.02.2001թ.-ի թիվ 125 որոշումներով սահմանված կարգի խախտմամբ:

«Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ

«Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՓԲԸ-ն 2006թ.-ին վերակազմավորման ձևով վերակազմակերպվել է «Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի, հետևաբար, համաձայն ՀՀ կառավարության 22.02.2001թ.-ի թիվ 125 որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պետք է վերանայել ՊՓԲԸ-ի կողմից նախկինում՝ 25.02.2003թ.-ին «Հանդ-Չոր» ՍՊԸ-ին վարձակալության տրված 5000ք.մ. մակերեսով ջերմատան, 01.11.2006թ.-ին Անահիտ Մուրադյանին վարձակալության տրված 1299.2ք.մ. մակերեսով ջերմատան և 299.8ք.մ. շինության և 19.11.2004թ.-ին «Ռոթո» ՍՊԸ-ին վարձակալության տրված տոմատի, հյութի և ձեթի արտադրության 1221.7ք.մ. մակերեսով գիտաարտադրական շենքի և մեկ E 1/9 կաթալի տարեկան վարձավճարների չափերը, ինչը չի կատարվել:

«Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» ՊՈԱԿ

ՊՈԱԿ-ը, որը հանդիսանում է «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» ՊՓԲԸ-ի իրավահաջորդը, չի վերանայել նախկինում՝ 1999թ.-ին 10 տարով Ա. Պետրոսյանին վարձակալության հանձնված Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղում գտնվող 239.9ք.մ. մակերեսով լաբորատորիայի շենքի տարեկան վարձավճարի չափը, ինչի արդյունքում յուրաքանչյու տարվա համար պակաս է հաշվարկվել և պետական բյուջե պակաս է գանձվել 375.5 հազ. դրամ վարձավճար: Չնայած այն հանգամանքին, որ վարձակալության պայմանագիրը կնքվել է 10 տարի ժամկետով, և 2009թ.-ին նրա գործողության ժամկետը լրացել է, մինչև օրս շենքը գտնվում է վարձակալի տնօրինման տակ:

«Անասնաբուծության և անասնաբուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ

«Անասնաբուծության և անասնաբուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Ագրո Միքս» ՍՊ ընկերությանը 2010թ.-ին վարձակալության է հանձնվել Կոտայքի մարզի Նոր գյուղ համայնքում տեղակայված ինստիտուտից 4892.4ք.մ. մակերեսով տարածք մեկ տարի ժամկետով՝ 8,627.2 հազ. դրամ տարեկան վարձավճարով, սակայն մինչ օրս վարձակալած գույքի համար ոչ մի դրամ վարձավճար չի գանձվել: Բացի այդ, կազմակերպությունը խախտելով ՀՀ կառավարության 24.12.2009թ.-ի թիվ 1522-Ն որոշման պահանջը, առանց ՀՀ ֆինանսների նախարարության թույլտվության, վարձակալության պայմանագրում նախատեսել է վարձակալված գույքից անբաժանելի բարելավումների փախսհատուցման դրույթ, որը անհրաժեշտ է անհապաղ փոփոխման և համապատասխանեցման գործող օրենսդրության պահանջներին:

XV. Բույսերի կարանտինի և երկրագործության և սննդամթերքի անվտանգության և անասնաբուծական պետական տեսչությունների գործունեության վերաբերյալ

Բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների, կենդանիների, կենդանական ծագման մթերքի, հումքի, կերերի և սննդամթերքի արտահանման և ներմուծման թույլտվությունների տրամադրումը կատարվել է գործող օրենսդրության պահանջների բազմաթիվ խախտումներով: Մասնավորապես՝

- մինչև 10.09.2009թ.-ը գործող պարտադիր լաբորատոր փորձաքննության ենթակա բույսերի, բուսական ծագում ունեցող մթերքի, սերմերի և տնկանյութի անվանացանկում ներառված բույսերի 5304 խմբաքանակի ներմուծման հավաստագրերը տրվել են առանց լաբորատոր փորձաքննության եզրակացության առկայության:

- 254736 գլուխ մանր եղջերավոր կենդանիների արտահանման սերտիֆիկատները տրամադրվել են առանց ներկրող երկրի անասնաբուժական պահանջներով նախատեսված հետազոտությունների և պատվաստումների իրականացման:

Արտահանման և ներմուծման թույլտվություն տալու 38723 դեպքերից գրանցվել է ընդամենը 5 մերժման դեպք:

Կենդանիների, կենդանական ծագման մթերքի, հումքի, կերերի և սննդամթերքի արտահանման թույլտվությունները չեն հիմնավորվում իրականացրած լաբորատոր հետազոտությունների քանակներով:

Սահմանային հսկիչ կետերում տեսուչների գործառույթները կրկնվում են նաև մաքսագերծման վայրերում և սահմանային հսկիչ կետերում նրանց ներկայությունը ոչնչով չի արդարացվում:

Ե Ձ Ը Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հավելագրված գումարներ, որոնք ենթակա են վերականգնման ՀՀ պետական բյուջե

- Հակակարկտային կայանների տեղակայման աշխատանքներում թույլ է տրվել 15,558.3 հազ. դրամի ծավալային հավելագրում (2009թ.-ին 5,590.6 հազ. դրամ և 2010թ.-ին՝ 9,967.7 հազ. դրամ):

- Շինարարական և վերանորոգման աշխատանքներում թույլ է տրվել 1,794.0 հազ. դրամի հավելագրում:

- 2011թ.-ին «Մերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից գարնանացան գարու սերմացու տեղափոխող վարորդներին փաստացի կատարած աշխատանքներից ավելի է վճարվել 280.5 հազ. դրամ:

- «Մերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից 2010թ.-ին ՌԴ-ից ներկրված աշնանացան ցորենի պահեստավորման համար վարձակալած տարածքի համար վճարվել է պայմանագրով նախատեսված գումարից ավելի 500,0 հազ.դրամ:

- 2010թ.-ին ՌԴ-ից ներկրված աշնանացան ցորենի վագոններ բեռնաթափող բանվորներին բեռնաթափման համար ավելի է վճարվել 424,0 հազ. դրամ:

- 2010թ.-ին ՌԴ-ից ներկրված աշնանացան ցորենի վագոնների բեռնաթափման, սերմացուն ՀՀ մարզկենտրոններ տեղափոխելու ծառայությունների դիմաց պայմանագրային գներից ավելի է վճարվել 2,299.0 հազ. դրամ:

- «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին վճարվել է 859,5 հազ. դրամ (2009թ.-ին 634.5 հազ. դրամ և 2010թ.-ին 225.0 հազ. դրամ) չլիզենգավորված վաճառքի կետերից և հողամասերից նմուշառված թունանյութերի փորձաքննության համար:

- Բուժականի տարածաշրջանում անտառապատված տարածքներից 18 հա-ում սերմնաբուսակներ ընդհանրապես չկան, հետևաբար, այդ աշխատանքների համար վճարված 9,467.0 հազ. դրամը ենթակա է հետ վերադարձման պետական բյուջե:

- Անտառավերականգնման աշխատանքների կատարողականներով ավել է վճարվել սերմնաբուսակի և խոշոր տնկիների հանման և տնկման աշխատանքներ գումարով 378.1 հազ. դրամ:

Պետական ոչ արևտրային կազմակերպությունների գույքի վարձակալություններից պետական բյուջե պակաս գանձված գումարներ

- «Երկրագործության և բույսերի պաշտպանության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը չի վերանայել նախկինում վարձակալության հանձնված շենքի տարեկան վարձավճարը, որի հետևանքով պակաս վարձավճար է հաշվարկվել և գանձվել բյուջե 2009թ.-ի համար 375.5 հազ. դրամ:

- «Անասնաբուժության և անասնաբուծության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Ագրո Միքս» ՍՊ ընկերությանը 2010թ.-ին վարձակալության է հանձնվել Կոտայքի մարզի Նոր գյուղ համայնքում տեղակայված ինստիտուտից 4892.4ք.մ. մակերեսով տարածք մեկ տարի ժամկետով՝ 8,627.2 հազ. դրամ տարեկան վարձավճարով, սակայն մինչ օրս վարձակալած գույքի համար ոչ մի դրամ վարձավճար չի գանձվել:

Նախահաշվային քանկագումներ

- Գյուղատնտեսական հողատեսքերի պահպանում, բարելավում և ինժեներական կառուցվածքների վերականգնում ծրագրով իրականացրած գետերի հունների մաքրման և ավերի ամրացման և ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների հաշվին կատարված շինարարական աշխատանքների նախահաշիվները սահմանված կարգի խախտմամբ հաշվարկելու արդյունքում նախահաշվային արժեքները ավել են հաշվարկվել 146,944.3 հազ. դրամով:

Անորակ աշխատանքներ և մատուցված ծառայություններ

- «Բիո Ունիվերսալ» ՍՊԸ-ից ձեռքբերված 417.6 հազ. դրամի 1 200 դոզա հակադաբադային պատվաստանյութերը ունեցել են մատակարարման պայմանագրին կից տեխնիկական բնութագրով սահմանվածից պակաս օգտագործման մնացորդային ժամկետ:

- «Կենսաարդ» ՍՊԸ-ի կողմից 2009թ.-ին Նախարարությանը մատակարարվել է շուկայից գնված անհայտ ծագման, որակի և առանց անհրաժեշտ ուղեկցող փաստաթղթերի 15 լիտր սիբիրախտի դեմ սիճուկը՝ գումարով 792.0 հազ. դրամի:

• Անտառապատման և անտառվերականգնման աշխատանքներում օգտագործվել են 292 563 հատ տնկման համար ոչ պիտանի սերմնաբուսակներ:

Անարդյունավետ ծախս

• ՀՀ գյուղատնտեսության մախարարության «ԳԲԱ» ԾԻԳ» ՊՀ-ի կողմից «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի հատկացված 19,159.9 հազ. դրամը չի ծախսվել ծրագրով մախատեսված նոր սորտերի ստացման, սերմերի լաբորատոր հետազոտություններում մեծ թվով սերմարտադրող տնտեսվարող սուբյեկտների ներգրավման և հավաստագրված սերմերի բազմատեսակի ընդլայնման աշխատանքների կատարման համար և չի ապահովվել ծրագրով մախատեսված արդյունքների ստացումը:

Ոչ նպատակային ծախսեր

• Արմավիրի մարզի Գայի գյուղական համայնքի տարածքում 2009թ.-ին հայտարարված բույսերի կարանտին միջոցառումների իրականացնելու համար հատկացված 12,663.2 հազ. դրամից 4,625.4 հազ. դրամը ծախսվել է կարանտին միջոցառումներ չհանդիսացող միջոցառումների համար:

Համապատասխանություն օրենսդրությանը

• Բարձր վերարտադրողականության սերմերի հավաստագրումը ՀՀ գյուղատնտեսության մախարարության կողմից իրականացնելու փոխարեն իրականացվել է նման իրավասություն չունեցող «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից՝ «Սերմերի մասին» ՀՀ օրենքի պահանջների բազմաթիվ և ՀՀ կառավարության կողմից հաստատված «Սերմերի հավաստագրման կարգ»-ի բոլոր կետերի պահանջների խախտումներով:

• ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1088-Ն «Անասնաբուծության մեջ օգտագործվող կենսապատրաստուկների ներմուծման և արտահանման կարգը սահմանելու մասին» որոշման 12-րդ կետի և ՀՀ կառավարության 2004թ.-ի սեպտեմբերի 9-ի թիվ 1335-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ-ում անասնաբուծության բնագավառում օգտագործվող կենսապատվաստուկների, շիճուկների և ախտորոշիչ միջոցների պատական գրանցման կարգի» 18-րդ կետի պահանջների խախտմամբ, Հանրապետություն են ներմուծվել ՀՀ-ում չգրանցված 1082100 դրոշմ անասնաբուծական դեղամիջոցներ և կենսապատրաստուկներ:

• ՀՀ կառավարության 2005 թվականի հուլիսի 21-ի թիվ 1088-Ն որոշման 13-րդ կետի պահանջի խախտմամբ, առանց փորձաքննության անցկացման, ՀՀ է ներմուծվել FAO-ի կողմից ՀՀ գյուղատնտեսության մախարարությանը օգնության կարգով տրամադրված 698000 դրոշմ հակադաբադային պատվաստանյութեր:

• Մեկեկցիոն նվաճումների համար ներկայացված հայտերը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից ընդունվել են «Մեկեկցիոն նվաճումների պահպանության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 6 կետի պահանջի խախտումով, այն է՝ բացակայում են տուրքի վճարումը հաստատող փաստաթղթերը:

- ՀՀ կառավարության 03.07.2008 թ. թիվ 704-Ն որոշմամբ հաստատված Միջնաժամկետ ծախսերի ծրագրով սահմանված բարձր վերարտադրողականության սերմերի որակի ստուգումներ իրականացնելու փոխարեն կատարվել են ցածր վերարտադրողականության սերմերի որակի ստուգում

- Բույսերի սորտափորձարկումներն իրականացվել են ՀՀ կառավարության 22.12. 2005 թ.-ի թիվ 2292-Ն որոշմամբ հաստատված «Բույսերի սորտերի տնտեսական օգտակարության պետական փորձարկումների կազմակերպման, Հայաստանի Հանրապետությունում օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի ցանկում դրանց գրանցման և գրանցումից հանելու» կարգի 7-րդ կետի պահանջի խախտումով՝ պետական փորձարկումները իրականացվել են առանց ՀՀ գյուղատնտեսության նախարարության համապատասխան որոշումների

- ՀՀ կառավարության 09.12.2005թ.-ի թիվ 2239-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) հավաստագրման» կարգի համաձայն, պետք է իրականացնեին անկախ ֆիզիկական անձ հանդիսացող դաշտային հետազոտողները (ապրոբատորները)՝ լիազորված պետական մարմնի կողմից հաստատված մեթոդիկայով, այնինչ լիազոր պետական մարմնի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից հաստատված որևէ մեթոդիկա գոյություն չունի, բացի այդ բոլոր ապրոբատորները հանդիսանցել են նաև հավաստագրերը տրամադրած «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներ:

- Շինարարական աշխատանքների նախահաշիվները կազմվել են ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.07.08թ.-ի թիվ 41-ն հրամանով հաստատված «Գործող գներով շինարարական աշխատանքների հաշվարկման կարգ»-ի պահանջների խախտմամբ:

- Այմավիրի մարզի Գ-այ համայնքում կարանտին միջոցառումների իրականացնելիս խախտվել են «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ մասի և 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 4-րդ մասի, ՀՀ կառավարության 03.12.2009թ.-ի N 1443-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները:

- 2009-2010թ.թ. Նախարարությունը ստացված ցինկի ֆոսֆիդը պահեստավորվել է բուսասանիտարական նորմերին չհամապատասխանող տարածքում՝ ավտոտնակում, ինչով խախտել է բուսասանիտարիայի մասին օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջը, որով արգելվում է բուսասանիտարական նորմերին չհամապատասխանող պահեստներում և շինություններում բուսանյութերի և կենսապատվաստուկների պահպանումը:

- Հակակարկտային կայանների տեղադրման դրամաշնորհի պայմանագիրը կնքվել է ՀՀ կառավարության 24.12.2003թ.-ի թիվ 1937-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական քյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և

դրամաշնորհների հատկացման» կարգի 37-րդ կետի պահանջի խախտմամբ, պայմանագրում չի նշվել ակնկալվող արդյունքը և դրա գնահատման չափորոշիչները:

- Հակակարկտային կայանների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը կազմվել են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 757 հոդվածի 1-ին կետի, 759 հոդվածի 1-ին կետի, Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 17-րդ կետի, 16-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 21.12.1998թ թիվ 812 որոշմամբ հաստատված «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխության» կարգ-ի 3-րդ, 5-րդ, 8-րդ կետերի պահանջների խախտմամբ:

- Շինարարական աշխատանքների տեխնիկական վերահսկողության աշխատանքներն իրականացվել են Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի երկրորդ ենթաբաժնի թ) կետի և ՀՀ քաղաքաշինության նախարարի 28.04.1998թ թիվ 44 հրամանով հաստատված «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման» կարգի պահանջների խախտմամբ:

- Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը, ՀՀ կառավարության 29.07.2010թ.-ի թիվ 971-Ն որոշման պահանջի խախտմամբ, 2010թ.-ին աշնանացան ցորենի ձեռքբերման պայմանագիրը Ռուսաստանի դաշնության «Մենենա Ստավրապոլյա» ՍՊԸ-ի հետ կնքելու փոխարեն, կնքել է Ռուսաստանի Դաշնության «Հացահատիկային ընկերությունների միավորում» ԲԲԸ-ի հետ:

- ՀՀ կառավարության 22.11.2005թ. թիվ 2122-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետություն մշակաբույսերի սերմերի ներմուծման և Հայաստանի Հանրապետությունից դրանց արտահանման» կարգի համաձայն, ՀՀ ներկրված մշակաբույսերի սերմերի խմբաքանակից, վերջնական նշանակման վայրում, վերցվում է մմուշ՝ լաբորատոր փորձաքննության և ստուգիչ տեղամասերում ցանքի նպատակով, իսկ արտահանվող մշակաբույսերի յուրաքանչյուր խմբաքանակի համար պետք է տրվի սերմի հավաստագիր: Տվյալ գործառույթները 2009-2010 թթ. ընթացքում չեն իրականացվել:

- «Ամասնաբուժության և ամասնաբուժության գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից «Ագրո Միքս» ՍՊ ընկերությանը 2010թ.-ին վարձակալության է հանձնված տարածքի վարձակալության պայմանագրում խախտվել է ՀՀ կառավարության 24.12.2009թ.-ի թիվ 1522-Ն որոշման պահանջը, առանց ՀՀ ֆինանսների նախարարության թուլովության, վարձակալության պայմանագրում նախատեսվել է վարձակալված գույքից անբաժանելի բարելավումների փախհատուցման դրույթ:

Առաջարկություններ

ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը

- Համակարգի կազմակերպություններում ակնկալվող եկամուտները պլանավորելիս հաշվի առնել գոյություն ունեցող բոլոր ռեսուրսները, գույքի վրաձակալության պայմանագրերը համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին, իսկ օտարման գործընթացներն իրականացնել օրենսդրական պահանջներին համապատասխան
- պատշաճ վերահսկողություն իրականացնել նախագծամախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների նկատմամբ բացառելով՝ նախահաշվային թանկացումները
- սերմերի հավաստագրումն իրականացնել բացառապես «Սերմերի մասին» ՀՀ օրենքի, «Սերմերի հավաստագրման կարգի» և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան
- օրենքով նախատեսված կարգով հսկողություն իրականացնել ՀՀ ներմուծվող, արտահանվող և ՀՀ-ում իրացվող սերմերի որակի նկատմամբ
- վերանայել մկնամման կրծողների դեմ գյուղացիական տնտեսությունների միջոցով ձեռքով պայքարի դեպքում ցինկի ֆոսֆիդի ծախսի նորման՝ այն հիմնավորելով համապատասխան հաշվարկներով
- բուսասանիտարական մոնիտորինգն իրականացնել ՀՀ գյուղատնտեսության նախարարի 23.08.2007թ.-ի թիվ 188-հրամանով հաստատված ցանկում ընդգրկված 11 անուն կարանտին օրգանիզմների համար և բույսերի առավել վտանգավոր վնասատուների դեմ աշխատանքներն իրականացնել կատարված մոնիտորինգի տվյալների հիման վրա կազմված վարակվածության քարտեզների համաձայն
- սահմանել ամասնաբուժական միջոցառումների իրականացման ժամանակացույց և ամասնաբույժերի հետ պայմանագրերը կնքել այդ ժամանակացույցով ներառված ժամանակահատվածի համար
- Հանրապետություն ներմուծման հավաստագրեր տրամադրել միմիայն Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված ամասնաբուժական դեղամիջոցներին և կենսապատրաստուկներին, բացառել սահմանված ջերմային ռեժիմների խախտմամբ պահված ամասնաբուժական դեղամիջոցների և կենսապատրաստուկների գնումը
- անտառային տնտեսությունը վարել հաստատված անտառկառավարման պլաններին համապատասխան
- սահմանել և հաստատել անտառսերմնային և տնկարանային տնտեսության վարման կանոնները
- սահմանել և հաստատել կողմնակի անտառօգտագործման կարգը
- հաստատել անտառօգտագործման, անտառահատման և անտառային տոմսերի ձևերը
- սահմանել արմատի վրա ծառուտի վաճառքի չափաքանակների հաշվարկման մեթոդիկան

- ՀՀ կառավարության հաստատմանը ներկայացնել պետական ամտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և ամտառապատման, առանձին աշխատանքների կատարման ծախսերի նորմատիվները

Ձեռնարկել միջոցառումներ՝

- Հակակարկտային կայանների տեղակայման, շինարարական և վերանորոգման աշխատանքներում արձանագրված ծավալագնային հավելագրումները՝ 15,558.3 հազ. դրամ պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:
- Նախարարության և համակարգի ՊՈԱԿ-ների կողմից չկատարված աշխատանքների դիմաց ծավալագնային հավելագրման արդյունքում պետական բյուջեից ստացված գումարները՝ 10,704.6 հազ. դրամը, պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:
- Ստացված սերմացուների պահեստավորման, բարձման-բեռնաթափման և տեղափոխման աշխատանքներում ավել վճարված 3,503.5 հազ. դրամը պետական բյուջե վերականգնելու ուղղությամբ:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը

- Այսպիսով ՀՀ տարածքում մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համակարգ ստեղծելու ծրագրով նախատեսված ռեագենտով գործող գեներատորային կայանների տեղակայման աշխատանքների իրականացումը:
- Հակակարկտային կայանների տեղակայման աշխատանքների գնումն իրականացնել սահմանված կարգով կազմված և հաստատված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում, գնման բաց ընթացակարգին համապատասխան:

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի, մեկամսյա ժամկետում ՀՀ վերահսկիչ պալատին գրավոր տեղեկատվություն տրամադրել հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ Ն Ա Խ Ա Ր Ա Ր

0010, Երևան-10, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 3
Ի պատասխան Ձեր _____ N _____

հեռ. (+374 10) 524-641, ֆաքս (+374 10) 523-793

_____ N _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2012 թվականի
փետրվարի 27-ի N 02/23.14/2449-12 հանձնարարականի
և «ՀՀ վերահսկիչ պալատի մասին»
ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի գ) կետի

Հարգելի պարոն Սարգսյան,

Ներկայացվում է տեղեկատվություն ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» N 3/2 որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների և պարզաբանումներ առանձին հարցերի վերաբերյալ՝

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի ապրիլի 5-ի N 61-Ա հրամանով հանձնարարականներ են տրվել նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին և պետական ոչ առևտրային կազմակերպությունների տնօրեններին՝ 15-օրյա ժամկետում որոշման մեջ արձանագրված խախտումները վերացնելու և գումարների վերականգնումն ապահովելու ուղղությամբ:

1. Անտառապարման և անտառվերականգնման միջոցառումներ – ծրագրով կատարված աշխատանքներում թույլ տրված 9845,10 հազ. դրամի հավելագրումներից՝ 378,1 հազ. դրամը «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից վերականգնվել է ՀՀ պետական բյուջեի թիվ 900005028155 գանձապետական հաշվին (վճարման հանձնարարագիրը կցվում է), իսկ չկատարված աշխատանքների համար կատարողական ակտերով ձևակերպված թվով 90000 սոճենու սերմնաբուսականների տնկման աշխատանքների համար՝ վճարված 9467,0 հազ. դրամը վերականգնվել է լրացուցիչ աշխատանքների իրականացմամբ, որի համար «Հայանտառ» ՊՈԱԿ-ը ներկայացրել է բացատրություն: Բուժականի անտառապետության 18 հա տարածքում սոճենու սերմնաբուսականների տնկման աշխատանքները «Հայանտառ» ՊՈԱԿ-ի կողմից 2009 թվականի աշնանը իրականացվել են ամբողջությամբ, և կատարված աշխատանքների դիմաց վճարվել է 9467,0 հազ. դրամ: Սոճենու անկման պատճառ է հանդիսացել 2010 թվականի անբարենպաստ

եղանակային պայմանները: 2010 թվականի աշնանը 18 հա տարածքը մաքրվել է չորացած սոճենիներից՝ 2011 թվականի գարնանը վերականգնման նպատակով: Այդ իսկ պատճառով ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված ուսումնասիրության ժամանակ սոճենու տնկանյութը բացակայել է: 2011 թվականի գարնանը նշված տարածքում սերմնաբուսակի տնկման նոր աշխատանքներ են իրականացվել՝ առանց լրացուցիչ վարձատրության:

2. Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և 2011 թվականին գարու արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում - «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ը պարտավորվել է ապահովել մատուցված ծառայությունների դիմաց պայմանագրային գներից ավելի վճարված 3503,5 հազ. դրամից /500.0+424.0+2299.0+280.5 հազ.դրամ/ 1374,5 հազ. դրամի (500,0+424.0+280.5+170,0) ՀՀ պետական բյուջե վերականգնումը: Միաժամանակ ՊՈԱԿ-ը ներկայացրել է բացադրություն 2299,0 հազ. դրամի վերականգնման վերաբերյալ, համաձայն որի՝ վերահսկիչ պալատի ստուգող խմբի կողմից կատարված հաշվարկներում պայմանագրերով նախատեսված վագոնների բեռնաթափման, սերմացուն ՀՀ մարզկենտրոններ տեղափոխման ծառայությունների դիմաց պայմանագրային գներից ավելի է վճարվել 2.299,0 հազ. դրամ: Սակայն այդ գումարից 2.129,0 հազ. դրամը քաղաքացիաիրավական պայմանագրերով առաջացած պարտավորությունների դիմաց վճարված սոցիալական ապահովագրության հատկացումներն ու աշխատավարձից պահվող եկամտահարկի գումարներն են (վճարման հանձնարարագրերը կցվում են), ուստի ՀՀ պետական բյուջե ենթակա է վերականգնման միայն 170,0 հազ. դրամը (2299,0-2129,0):

3. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների հաշվին «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին չլիցենզավորված վաճառքի կետերից վերցրած թունանյութերի նմուշների փորձաքննության համար վճարված 859,5 հազ. դրամի ՀՀ պետական բյուջե վերականգնման վերաբերյալ «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ը ներկայացրել է հետևյալ բացադրությունը՝ որոշման մեջ արձանագրված «Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին վճարվել է 859,5 հազ. դրամ (2009 թ.՝ 634.5 հազ դրամ և 2010 թ.՝ 225.0 հազ դրամ), որը տրամադրվել է չլիցենզավորված վաճառքի կետերից և հողամասերից նմուշառված թունանյութերի փորձաքննության համար: Վերը նշված գումարը «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ենթակա չէ վերականգնման ՀՀ պետական բյուջե վերականգնման, քանի որ վերոնշյալ թունանյութերի փորձաքննության համար նմուշառումը կատարվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության բույսերի կարանտինի և երկրագործության պետական տեսչության մարզային տեսչի կողմից՝ համաձայն «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի: Լաբորատորիայի իրավասությունների շրջանակներից դուրս է նմուշառված վաճառքի կետերի կարգավիճակի պարզաբանումը, և լաբորատորիան բարեխիղճ ձևով իրականացրել է իր վրա դրված պարտականությունները՝ փորձաքննությունների արդյունքների մեկ օրինակը ներկայացնելով տեսչությանը: Տեսչության կողմից նմուշառված թունանյութերի փորձաքննություն չկատարելու իրավասություն լաբորատորիային վերապահված չէ:

4. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների հաշվին իրականացված շինարարական և վերանորոգման աշխատանքներում թույլ տրված 1794,0 հազ. դրամի (1535.0 հազ. դրամ «Տիրանուն» և 259.0 հազ. դրամ «Աննար» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կողմից) հավելագրումներից՝ 259,0 հազ. դրամը «Աննար» ՍՊԸ-ի կողմից վերականգնվել է ՀՀ պետական բյուջե

(վճարման հանձնարարագիրը կցվում է), իսկ 1535,0 հազ դրամը «Տիրանուն» ՍՊԸ-ի կողմից դեռևս չի վերականգնվել:

5. ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1253-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ տարածքում մթնոլորտային վրանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համակարգ ստեղծելու ծրագրի» շրջանակներում կատարված հակակարկային կայանների տեղակայման աշխատանքներում «Պոստ Լեքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից թույլ տրված 15558,3 հազ. դրամի ծավալագնային հավելագրումները ընկերության կողմից չի ընդունվել՝ իրականությանը չհամապատասխանելու պատճառաբանությամբ (կցվում է «Պոստ Լեքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ի գրությունը):

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի մարտի 3-ի N ՍԿ/07.2/1645-12 գրությամբ «Պոստ Լեքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ի վերաբերյալ նյութերը հանձնվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

Առդիր՝ 8 էջ:

Հարգանքով՝



ՍԵՐԳՈ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Կատարող՝ ֆինանսատնտեսագիտական
և հաշվապահական հաշվառման
վարչ. պետ՝ Կ. Ավետիսյան
հեռ. 52 36 85

Իրավաբանական վարչության պետ՝
Կ. Գրիգորյան
Հեռ. 529231

Վճարման համեմարարական N 249
05/04/2012

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՍՅԱՍՆԻԿՅԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
AMD

Սոց. քարտ
Վճարող
»Հայաստան» ՊՈԱԿ

ՀՎՀՀ 23 02512343


Բանկ: «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ «ՍՅ
ՍՏԱՅՈՂ
ՀՀ Պետական բյուջե կողմից

Կոդ	Ղեկավար	Գումար
16303	8001166	3313
Կոդ	Կրեդիտ	378,100.00
90000	5028155	Տուգանքը օրվա
		Գումարը տուգանք

Բանկ: Կենտրոնական Գանձապետարան
Գումարը տառերով
Երեք հարյուր յոթանասուներեք հազար հարյուր դրամ

Վճարման նպատակը:
Ստուգման ակտով արձանագրված գումարի
վերականգնում

Գումարը դրամով 378,100.00
Փոխարժեք 1 /1
Կ. Տ. Ստորագրություններ:



Ստր. 05/04/2012 12:54
Տպ. 05/04/2012 2:40:

Սուտքը բանկ

0401002

ՎճԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ N

12.1 Տարբ. 2008թ.

Վճարող	Վճարողի բանկ	Կոդ	Ղեկավար	Գումարը
ՀՀ Կապիտալ	ՀՀ Կապիտալ	24137	100346300	253.000
Ստացող	ՀՀ Կապիտալ	90000	5220640	AMD

Գումարը բառերով հինգ հարյուր հարյուր հարյուր ՀՀ դրամ

Վճարման նպատակը, ապրանքի անվանումը, կատարված աշխատանքը, մատուցված ծառայությունը, ակտիվացված
փաստաթղթերի համարները եւ գումարները

ՀՀ Կապիտալ
հաճախակի 22.92.28.02.2012 15:45/07 2/332
Կապիտալ

Կ.Տ.

Հաճախորդի ստորագրություններ

Բանկի ստորագրություններ

«ՊՈՍՏ ԼԵԿՍ ԲՈՆՍԱԼԹԻՆԳ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ



«ПОСТ ЛЕКС КОНСАЛТИНГ»

ОБЩЕСТВО С ОГРАНИЧЕННОЙ
ОТВЕТСТВЕННОСТЬЮ

իր. հասցե՝ ք. Երևան, Արեւյան 6/1, C301 սենյակ, Հեռ. 374 91907000, E mail info@arm-consulting.com
գործ. հասցե՝ ք. Երևան, Պարոյր Սևակի 13/4

Ն 0324

22.03.2012թ.

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
Կ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Միքայելյան.

«Պոստ Լեքս Բոնսալթինգ» ՍՊ ընկերությունը 15.03.2012թ. ստացել է Ձեր ստորագրությամբ 28.02.2012թ. թիվ ԿՄ/07.2/931-12 գրությունը, որում նշվում է ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքներով հակակարկտային կայանների տեղակայման, շինարարական և վերանորոգման աշխատանքներում 15.558.300 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր հիսունութ հազար երեք հարյուր) ՀՀ դրամի չափով ծավալագրային հավելագրումների արձանագրման և այդ գումարի՝ կենտրոնական զանձապետարանի համապատասխան հաշվին փոխանցելու անհրաժեշտության մասին:

Հայտնում եմ, որ նշված հավելագրումների փաստն ընկերությունը չի ընդունում՝ այն իրականությանը չհամապատասխանելու պատճառաբանությամբ:

ՀՀ վերահսկիչ պալատը ստուգումների արդյունքում կազմել էր արձանագրություն, որի վերաբերյալ մանրամասն առարկություններ է ներկայացվել՝ շարադրելով բոլոր փաստերը, փաստարկներն ու իրավական հիմքերը, որոնցով միանշանակ հերքվում են հավելագրումների մասին անհիմն ենթադրությունները և գումար վերականգնելու մասին իրավական հիմք չունեցող հետևությունները:

Մասնավորապես, չափագրումները կատարված են ոչ ճիշտ:

Բացի այդ, «հավելագրումներ» արտահայտությունը տվյալ դեպքում ընդհանրապես տեղին չէ, քանզի աշխատանքներն ամբողջությամբ կատարվել և պատշաճ կարգով հանձնվել են առանց թերությունների, դրանց արժեքը վճարվել է պայմանագրով սահմանված չափով: «Ծավալային հավելագրում» ասելով հասկանում ենք այս կամ այն աշխատանքի՝ հանձնված իրական արդյունքից ավելի մեծ ծավալով արդյունք ներկայացնելը, ինչը տվյալ դեպքում բացակայում է, քանի որ մեր կողմից հանձնվել են պայմանագրով սահմանված որոշակի քանակի և որակի հակակարկտային կայաններ, որոնց արժեքը սահմանվել և վճարվել է ոչ թե դրանց վրա կատարված ծախսերի հիման վրա, այլ յուրաքանչյուր կայանի համար կայուն գնով:

Այսպիսով, ընկերությունը հերքում է հավելագրումների փաստը և որևէ գումար վերադարձնելու պարտավորության առկայությունը: Այն հիմնավորված չէ ոչ փաստական հանգամանքներով, ոչ էլ արդյունագրով կամ որևէ այլ նորմատիվ իրավական ակտով:

Հարգանքով
Տնօրեն




Գ. Գրիգորյան

22 03 2012
16/1830-12


ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 247
"28" դեկտեմբեր 2010թ..

0401002

Վճարող՝ «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ ՀՎՀՀ - 00091693	ԴԵԲԵՏ h2.N 19300-05627050100	ԳՈՒՄԱՐ (AMD) 107054510-00
Վճարողի բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ Բանկի կոդ՝ 19300	ԿՐԵԴԻՏ h2.N 900011008902	օրվա տույժ %-ից
Ստացող՝ ՀՀ Ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն ՀՎՀՀ -	h2.N	գումարը տույժով
Ստացողի բանկը՝ Պետ. գանձապետարան Բանկի կոդ՝		
Փոստով-հեռագրով (ընդգծել)		Գործ. տեսակ Վճար. նշան. Վճար. ժամկ. Հերթ. վճար. Քղ. բանկի N
Գումարը բառերով՝ Մեկ հարյուր յոթ միլիոն հիսունչորս հազար հինգ հարյուր տասը դրամ		
Ապրանքի ստացման, կատարված ծառայության Ա/Թ		
Վճարման նպատակը, կատարված ծառայությունների, աշխատանքների, ապրանքի անվանումը, ապրանքային փաստաթղթերի գումարները և NN. ՀՀ. 2010-2014 թվականներին ցորենի սերմաբուծության և սերմարտադրության զարգացման ծրագրի խնայված գումարների ետ վերադարձ		
Կ. Տ. Հաճախորդի ստորագրություններ՝ _____ _____ 		

28 DEC 2010

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 185
"26" հոկտեմբերի 2010թ.

Վճարող՝ «ՍԵՐՄԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ ՀՎՀՀ - 82 - 00091693	ԴԵԲԵՏ h2.N 19300-05627050100	ԳՈՒՄԱՐ (AMD) 884,800.00
Վճարողի բանկը՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ Բանկի կոդ՝ 19300	ԿՐԵԴԻՏ h2.N 90000-5035028	օրվա տույժ %-ից
Ստացող՝ Էջմիածին ՏՀՏ ՀՎՀՀ -	h2.N	գումարը տույժով
Ստացողի բանկը՝ Պետ. գանձապետարան Բանկի կոդ՝ 90000		
Փոստով-հեռագրով (ընդգծել)		Գործ. տեսակ Վճար. նշան. Վճար. ժամկ. Հերթ. վճար. Քղ. բանկի N
Գումարը բառերով՝ Ութ հարյուր ութսունչորս հազար ութ հարյուր դրամ		
Վճարման նպատակը, կատարված ծառայությունների, աշխատանքների, ապրանքի անվանումը, ապրանքային փաստաթղթերի գումարները և NN. հոկտեմբեր ամսվա բաղ. իրավունքային հարաբերությունների վճարված գումարներից սոց աղաիովագրության հաշվացում		
Կ. Տ. Հաճախորդի ստորագր.՝ _____ _____ 		

26 OCT 2010

Վճարման հաշվառման գրք N 200
"17" նոյեմբերի 2010թ.

«ՍԵՐՍԵՐԻ գործարկության համակարգ» ՊՈԱԿ		ԴԵԲԵՏ	ԳՈՒՄԱՐ (AMD)
82 - 00091693		h2.N 19300-05627050100	209,523.00
ի պանկը` արքանկ>ՓԲԸ	Քանկի կողմ`19300	ԿՐԵԴԻՏ h2.N 90000-5035028	օրվա տույժ %-ից
ի Էջմիածին ՏՀՏ			
ի պանկը` գանձադեսարան	Քանկի կողմ`90000	h2.N	գումարը տույժով
տու-հետագրով (ընդգծել)			Գործ. Ետևակ Վճար. Դժման. Վճար. Ժամկ. Յերթ. Վճար. Քղ. քանկի N
վարք քաներով` Երկու հարյուր ինը հազար հինգ հարյուր ֆանգերեք բան			
Վճարման նպատակը, կատարված ծառայությունների, աշխատանքների, աղբյուրի անվանումը, աղբյուրի կատարողների գումարները և NN. Բաղ. իրավական դրամագրերի գծով և ստորագրողի անունը հասկացում			
Կ. Տ.	Հանձնարողի ստորագր.		

ՍԵՐԲԻՍ ԲԱՆԿ ՊՈԱԿ
ԵՋՄԻԱԾԻՆ
17.11.2010
209,523.00
Ստորագրող
ԱՄԵՆԱԿ

ՎճԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳԻՐ N 186

"26" հոկտեմբերի 2010թ.

Վճարող՝ «ՍԵՐՄԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ ՀՎՀՀ - 82 - 00091693 Վճարողի բանկը՝ «Կոմվերսբանկ»ՓԲԸ Քանկի կոդ՝ 19300	ՀԵՔԵՏ h2.N 19300-05627050100 ԳՐԻՄԱՐ (AMD) 846,200.00
Ստացող՝ Էջմիածին ՏՀՑ ՀՎՀՀ - Ստացողի բանկը՝ ՊԵՏ.ՎԱՄԱՊԵՏԱՐԱՆ Քանկի կոդ՝ 90000	ԿՐԵՂԻՏ h2.N 90000-5006011 ՕՐԿԱ ՏՈՂՈՒՄ %-ից
Փոստով-հեռագրով (ընդգծել) Գումարը բառերով՝ Ութ հարյուր բաժանունվեց հազար երկու հարյուր դրամ	
Վճարման նպատակը, փաստաթղթերի համարները, արժեքի անվանումը, արժեքի փաստաթղթերի գումարները, և NN. հոկտեմբեր ամսվա բաղ. իրավական աս. անվանումը, փաստաթղթերի գումարները	
Կ. Տ. Երևանի քաղաքի	Վճարման ամսական « 20 » 10 Քանկի աստիճան

Վճարման ամսական

« 20 » 10

Քանկի աստիճան

26 OCT 2010

[illegible]



« _____ » 20

N° _____

**ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱԾԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Սարգսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի 2012 թվականի փետրվարի 27-ի N02/23.14/2449-12 հանձնարարականի՝ ներկայացվում է ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 2012 թվականի փետրվարի 10-ի թիվ 3/2 և թիվ 3/4 որոշումներով հաստատված հաշվետվություններում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը վերաբերող հարցերի վերաբերյալ տեղեկատվություն:

Առդիր՝ 2 էջ:

Հարգանքով՝

Ա. ԵՐԻՅՅԱՆ

Կատարող՝ Է. Կարապետյան
Հեռ. 060 440 228

Հասցե՝ ՀՀ, ք Երևան, 0054, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8

Հեռ.՝ (+37410)362015, ֆաքս՝(+37410)363449

Էլ. փոստ՝ mes@mes.am, կայք՝ www.mes.am

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի կողմից 2012 թվականի փետրվարի 10-ի
թիվ 3/2 որոշումով հաստատված հաշվետվություններում

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը վերաբերող հարցերի վերաբերյալ

«ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» /ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի որոշում, թիվ 3/2, 10.02.2012 թ./

- ՀՀ տարածքում մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համակարգ ստեղծելու ծրագրով նախատեսված ռեազենտով գործող գեներատորային կայանների տեղակայման աշխատանքների իրականացումը ապահովելու վերաբերյալ.

Ներկայումս ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության ենթակայությամբ գործող «Մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կազմում գործում են 119 գազագեներատորային ռադիոմոդեմային հեռակառավարվող, ռադիոլոկացիոն կայանով դեկավարվող հակակարկտային կայաններ, որոնցից մեկը շարժական հենքի վրա: Նշված կայաններով պաշտպանության տակ են վերցված երեք մարզերի 42 համայնքների ընդհանուր 33500 հեկտար տարածքից 9440 հեկտար ինտենսիվ մշակության տարածքներ:

ՀՀ վարչապետի հանձնարարությամբ իրավիճակ են փորձագետներ, հանրապետության տարածքում կարկտի դեմ պայքարի աշխատանքները բարձր արդյունավետությամբ իրականացնելու համար, ուսումնասիրություններ կատարելու նպատակով: Ուսումնասիրվելու են Հայաստանի Հանրապետության պաշտպանվող տարածքների աշխարհագրական, բնակլիմայական և օդերևութաբանական բնութագրիչները՝ կարկտի դեմ պայքարի գազագեներատորային, ռեազենտային և իոնային մեթոդներից, կիրառության համար առավել արդյունավետ և նպատակահարմար մեթոդի ընտրության համար: Արդյունքում, հնարավոր կլինի լուծել հանրապետությունում հակակարկտային պաշտպանության իրականացման հարցերը՝ ճշգրիտ որոշելով հակակարկտային կայանների տիպերը և տեղադրման վայրերը:

- Հակակարկտային կայանների տեղակայման աշխատանքների գնումը սահմանված կարգով կազմված և հաստատված նախագծա-նախահաշվային փաստաթղթերի առկայության դեպքում, գնման բաց ընթացակարգին համապատասխան իրականացնելու վերաբերյալ.

Հակակարկտային կայանների տեղակայման աշխատանքների գնումն իրականացվել և իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

«Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների օգտագործման (վերամշակում, վնասազերծում, պահպանում, փոխադրում և տեղադրում) նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» /ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի որոշում, թիվ 3/4, 10.02.2012 թ./



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան-10, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 3

հեռ. (+374 10) 524-641, ֆաքս (+374 10) 523-793

Ի պատասխան Ձեր _____ N _____

_____ N _____

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Ի կատարումն ՀՀ վարչապետի
2013 թվականի հունվարի 23-ի
02/23.16/795-13 հանձնարարականի

Հարգելի պարոն Սարգսյան,

Ներկայացվում է տեղեկատվություն՝ ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2012 թվականի փետրվարի 10-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների օգտագործման, ինչպես նաև պետական սեփականության կառավարման և օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ ընթացիկ հաշվետվությունը հաստատելու մասին» N 3/2 որոշման /այսուհետ՝ որոշում/ մեջ արձանագրված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ՝

1. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների հաշվին իրականացված շինարարական և վերանորոգման աշխատանքներում թույլ տրված 1794,0 հազ. դրամ հավելագրումներից՝ 259,0 հազ. դրամը «Աննար» ՍՊԸ-ի և 1535,0 հազ. դրամը «Տիրանուն» ՍՊԸ-ի կողմից վերականգնվել է ՀՀ պետական բյուջե:

2. ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 18-ի N 1253-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ տարածքում մթնոլորտային վտանգավոր երևույթների վրա ակտիվ ներգործության համակարգ ստեղծելու ծրագրի շրջանակներում կատարված հակակարկտային կայանների տեղակայման աշխատանքներում «Պոստ Լեքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ի կողմից թույլ տրված 15558,3 հազ. դրամ գումարով ծավալագնային հավելագրումներն ընկերության կողմից չի ընդունվել իրականությանը չհամապատասխանելու պատճառաբանությամբ: Ընկերությունը դիմել էր դատարան, որի արդյունքում «Պոստ Լեքս Քոնսալթինգ» ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ վերահսկիչ պալատի, երրորդ անձ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մերժվել է:

3. Անտառապատման և անտառվերականգնման միջոցառումներ ծրագրով կատարված աշխատանքներում թույլ տրված 9845,10 հազ. դրամ հավելագրումներից՝ 378,1 հազ. դրամը «Հայանտատ» ՊՈԱԿ-ի կողմից վերականգնվել է ՀՀ պետական բյուջեի թիվ 900005028155 գանձապետական հաշվին, իսկ չկատարված աշխատանքների համար կատարողական ակտերով ձևակերպված թվով 90000 սոճենու սերմնաբուսակների

տնկման աշխատանքների համար վճարված 9467,0 հազ. դրամը վերականգնվել է լրացուցիչ աշխատանքների իրականացմամբ:

4. Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և 2011 թվականին գարու արտադրության զարգացման ծրագրի շրջանակներում - «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց պայմանագրային գներից ավելի վճարված 3503,5 հազ. դրամից /500.0+424.0+2299.0+280.5 հազ.դրամ/ 1374,5 հազ. դրամը վերականգնվել է (500,0+424.0+280.5+170,0) ՀՀ պետական բյուջե: Միաժամանակ ՊՈԱԿ-ը ՀՀ վերահսկիչ պալատին ներկայացրել է բացատրություն 2299,0 հազ. դրամի վերականգնման վերաբերյալ: ՀՀ պետական բյուջե է վերականգնվել 170,0 հազ. դրամ:

Որոշմամբ ներկայացված առաջարկությունների հիման վրա՝

1. վերանայվել է մկնանման կրծողների դեմ գյուղացիական տնտեսությունների կողմից ձեռքով պայքարի դեպքում ցինկի ֆոսֆիդի ծախսի չափաբաժինը և ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2005 թվականի մայիսի 12-ի N 80-Ա հրամանում կատարվել է համապատասխան փոփոխություն /ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի N 184-Ա հրաման/:

2. Արձակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի <<Պետական անտառների անտառօգտագործման՝ անտառհատման և անտառային տոմսերի ձևերը և տրամադրման կարգը հաստատելու մասին>> N142-Ն հրամանը:

3. Արձակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի <<Պետական և համայնքային անտառային հողերում կողմնակի անտառօգտագործման կարգը հաստատելու մասին>> N159-Ն հրամանը:

4. Մշակվել և ներկայումս շահագրգիռ գերատեսչություններին և հասարակական կազմակերպություններին քննարկման է ներկայացվել <<Պետական անտառների պահպանության, պաշտպանության, վերականգնման և անտառապատման, առանձին աշխատանքների կատարման ծախսերի նորմատիվները հաստատելու մասին>> ՀՀ կառավարության որոշման և <<Անտառսերմնային և տնկարանային տնտեսության վարման կանոնները հաստատելու մասին>>, <<Պետական անտառներում արմատի վրա ծառուտի վաճառքի չափաքանակների հաշվարկման մեթոդիկան սահմանելու մասին>> ՀՀ գյուղատնտեսության նախարարի հրամանների նախագծերը:

5. Անասնաբուժական միջոցառումների իրականացման համար <<Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն>> ՊՈԱԿ-ի և անասնաբույժ մասնագետների միջև կնքվել են ծառայությունների մատուցման պայմանագրեր:

Հարգանքով՝

 ԿԱՐԱՊԵՏՅԱՆ